

ԱՄՆ-ի արտաֆին ֆաղափականութիւնը եւ Հայկական Հարցը (1900-1976 թթ.)

(ԱԿՆԱՐԿ)

ԶԱԻԷՆ ՄՍԸՐԼԵԱՆ

ԺԹ. դարու վերջաւորութեան՝ Օսմանեան Կայսրութեան կողմէ Հայոց դէմ կազմակերպուած ջարդերը յուզեցին Եւրոպայի եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու հանրային կարծիքը: Հայոց հանդէպ ձեռք առնուած միջոցառումներուն պատճառով բարձրացած դատապարտութեանց ու բողոքի ձայները իրենց արձագանգը գտան նաեւ Նոր Աշխարհի ամերիկացիներուն: Հայոց կրած տառապանքներու մասին՝ Արեւմտեան Հայաստանի եւ Թուրքիոյ հայաբնակ շրջաններու մէջ դորձող միսիոնարներու ԱՄՆ դրկած տեղեկագրերները իրենց կարեւոր բաժինը ունեցան Հայկական Դատի հանդէպ եւ անոր մասին ձեւաւորուող հանրային կարծիքին մէջ:

Դարասկիզբին՝ ԱՄՆ-ի նախագահ Թէոտոր Ռուզվելթ, 13 Յունուարի, 1906 թուակիր դիմումագիր մը ու ներփակ՝ խնդրագիր մը ստացաւ ի նպաստ հայոց, ներկայացուած նիւ եորքարնակ ձէյմս Ռէյնոլտի կողմէ: Խնդրագիրը ստորագրած էին երեսունմէկ ծերակուտականներ եւ քսանմէկ երեսփոխաններ՝ Ֆրանսայէն, երկու ծերակուտականներ եւ տասնմէկ երեսփոխաններ՝ Իտալիայէն, երկու ծերակուտականներ եւ քսուասունմէկ երեսփոխաններ՝ Պելճիքայէն, մէկ երեսփոխան՝ Շուէտէն, ութը երեսփոխաններ՝ Տանիմարքայէն ու վերջապէս տասնըկէց անգլիացի եպիսկոպոսներ: Ստորագրողները կը պահանջէին որ ԱՄՆ, եւրոպական երկիրներու հետ համաձայնարար, ձեռնարկէ Օսմանեան Կայսրութեան մէջ կարգ-կանոն ու խաղաղութիւն հաստատելու աշխատանքին, ու երաշխաւորէ հոն բնակող հայոց կեանքի, ստացուածքի ու պատուի ապահովութիւնը:

Ոնդրագիրը ստորագրողները կ'ակնկալէին որ նախագահ Ռուզվելթ անձամբ ու հրապարակաւ պատասխանէր իրենց: Սակայն յանուն ԱՄՆ-ի նախագահին, խնդրագրին պատասխանեց պետական քարտուղար Էլիհու Ռուտի, եւ զայն հասցէագրեց Ճէյմս Ռէյնոլտի: Իր պատասխան գիրին մէջ Ռուտի կը գրէր.

«Տէ՛ր, նախագահը ստացած է, ձեր 13 Յունուար թուակիր նամակը, ինչպէս նաեւ եւրոպացիներու կողմէ ստորագրուած խընդրագիրը, որով կոչ կ'ուղղեն նախագահին՝ թուրքիոյ հպատակ Հայերու կրած անգթութեանց առաջն առնելու:

«Ամերիկայի ժողովրդեան կարեկցութիւնը բոլոր երկիրներու ճնշուածներուն հանդէպ յաջորդաբար արտայայտուած է այս կառավարութեան այլ եւ այլ միջոցներով եւ դժբախտ Հայերու նկատմամբ՝ ճարտարախօս կերպով ձայնակցուելով ամերիկեան հասարակութեան կողմէ: Նախագահը կ'ուղէ որ Հայերը վայելեն կեանքի, դոյքի ապահովութիւն, այն, ինչ որ եւրոպական կառավարութիւնները նպատակ ունեցած են անոնց համար ձեռք բերելու:

«Թուրքիոյ հպատակ Հայերու տառապանքները բարձրաձայն օգնութիւն եւ դարման կ'աղաղակեն: Այդ տառապանքները վրդոված են Համայն մարդկութեան մարդասիրական զգացումները եւ աշխարհ միացած է ողբալու ու դատապարտելու այն ցեղային թշնամութիւնները, որոնք կը տիրեն թուրք բնակչութեան տարբեր տարրերու միջեւ:

«Միաց. Նահանգներու ջանքերը, որոնք անհրաժեշտօրէն օրինաւոր եւ հզօր միջամտութեան ուժ չունին, աննշան կամ ոչ մէկ արդիւնք կը բերեն, նկատի առնելով ուրիշ պետութեան մը դործերուն եւ շարժառիթներուն դատապարտութիւնը, որ անխուսափելիօրէն պիտի յայտնուի աւելի վնասակար քան օգտակար պիտի հանդիսանայ այն անբախտ արարածներու համար, որոնց նպաստել ցանկալի կ'ըլլար»:

ԵԼԻՀՈՒ ՌՈՒՏ (1)

Գասներորդ դարի սկիզբին, ԱՄՆ մեկուսապաշտ քաղաքակնութիւն մը կը վարէր: Նոյնիսկ Համաշխարհային Առաջին Պատերազմին ԱՄՆ չէզոք քաղաքականութիւն մը կը վարէր մինչեւ 1917 թ.: Այսուհանդերձ, ԱՄՆ իբր չէզոք պետութիւն պատերազմի շրջանին իր դիւանագիտական կապերը պահած ըլլալով Օսմանեան Կայսրութեան հետ, Կ. Պոլսոյ ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորկընթաուի

1. Խորէն Գաբիկեան, Թէոսօր Ռուզվելթ եւ Հայերը, «Այգ» (օրաքերթ), Պէյրութ:

միջոցով մօտէն հետեւեցաւ 1915 թ.էն սկսեալ հայ ազգին վրայ զործադրուած Բրքական ցեղասպանութեան: Դեսպան Մորկընթաուի միջոցով դաշնակից մեծ պետութիւնները (Մեծն Բրիտանիա, Ռուսիա եւ Ֆրանսա) 1915 թ.ի Մայիսի 22-ին Բարձրագոյն Դրան ներկայացուցին աղաբարազիր մը, բողոքելով «Թուրքիոյ՝ մարդկութեան դէմ կատարած ոճիրներուն» համար, հրապարակաւ յայտնելով թէ կատարուած եղեռնին համար Օսմանեան Կառավարութեան բոլոր անդամները անձամբ պատասխանատու պիտի նկատուին (2):

Ամերիկեան դեսպանը Օսմանեան կառավարութեան մէջ զբողոք ամերիկեան հիւպատոսարաններէն եւ միսիոնարներէն իր ըստոյզ տեղեկութիւնները քաղելէ ետք, ոչ միայն իր կառավարութիւնը տեղեկ պահեց տեղի ունեցող անցուղարձեւումն, այլ եւ քանիցս փորձեց Թուրքիոյ ներքին գործոց նախարար Թալաթին ու իթթիհատական այլ ղեկավարներ զբառութեան հրաւիրել: Սակայն դեսպանը կը խոստովանի իր յուշերուն մէջ թէ «բերեք չյաջողեցաւ ամենաթեթեւ շարժում իր (Թալաթի) սիրտը շարժել», մինչև իսկ ներքին գործոց նախարարը «տհաճութիւն արտայայտեց այն շահագրգռութեան համար՝ զոր ամերիկացիները հայերուն կը ցուցնէին»: Դեսպանը՝ Թալաթի կը յայտնէ. «Դուք ամէն կողմ հանրային կարծիքը ձեզի դէմ պիտի գտնէք, մանաւանդ Միացեալ Նահանգներուն մէջ: Մեր ժողովուրդը երբեք պիտի չմոռնայ այս վարդերը: Ամերիկացիները միշտ ուր պիտի պահեն Թուրքիայի մէջ քրիստոնեաներուն միահաղոյն բնաջնջումին համար: Անոնք զայն ուրիշ բան պիտի չնկատեն, բայց եթէ կամաւոր ոճրագործութիւն, եւ լրջօրէն պիտի դատապարտեն այն բոլոր մարդիկը՝ որոնք անոր պատասխանատուներն են» (3):

Դեսպան Մորկընթաու եւ կինը, որ չհանդուրժելով տիրող մթնոլորտին պիտի հեռանար Թուրքիայէն, մեծապէս պիտի նպաստէին ԱՄՆ-ի ժողովուրդին՝ հայոց դէմ գործադրուած խժովութիւնները տեղեկ պահելու գործին:

Կարեւոր թիւով նաւերու, «Արմենիա»ի, բայց մանաւանդ «Լիւսիթինիա» նաւուն՝ դերման ծովուժին կողմէ ընկղմումէն ետք, ԱՄՆ 1917 թ.ին մտաւ Համաշխարհային Առաջին Պատերազմին: 1917 թ.ի Ապրիլի 20-ին, ԱՄՆ խզեց իր յարաբերութիւնները Թուրքիոյ հետ, բայց պատերազմ չյայտարարեց: Այսուհանդերձ, ԱՄՆ-ի նա-

2. **Foreign Relations of the U.S.**, 1915, (Suppl.), pp. 982, 989-990.

3. Henry Morgenthau, **Ambassador Morgenthau's Story**, Garden City, N. Y., 1918, ch. XV.

խազահ վուտրո Ուելսըն, իր 8 Յունուարի 1918 թ.ին հռչակած նշանաւոր «14 կէտեր»էն 12-րդ կէտը յատկացուցած էր Օսմանեան Կայսրութեան ահեղ լուծին տակ տառապող ժողովուրդներուն: 12-րդ կէտին մէջ կ'ըսուէր. «Օսմանեան Կայսրութեան թրքական մասերը իրենց ժամանակակից կազմով պէտք է ստանան ապահովուած ու հաստատուն վեհապետութիւն: Իսկ ներկայիս թուրքերու իշխանութեան տակ գտնուող միւս ազգութիւնները պէտք է ստանան աներկբայ երաշխիք իրենց զոյութեան համար, այլեւ բացարձակապէս անխախտելի պայմաններ՝ ինքնօրէն դարձացման...» (4):

Եւտ պատերազմեան շրջանին «Չորս Մեծերու» (Մեծն Բրիտանիա, Ֆրանսա, ԱՄՆ եւ Իտալիա) խորհուրդը անմիջապէս ճանչցաւ հայ ժողովուրդի սեփական պետութիւն կազմակերպելու իրաւունքը, եւ որոշեց նշանակել միջազգային յանձնախումբ մը, որ առարկայական տեղեկութիւններ պիտի հաւաքէր Օսմանեան պետութեանն անջատուելիք հողամասին վրայ ապրող բնակչութեանց մասին: Յանձնախումբը չկազմուեցաւ: Միայն ամերիկացիները քննութիւններու ձեռնարկեցին 1919 թ.ի Յունիսէն Յուլիսի 21: Ամերիկացի երկու պատուիրակներու՝ Քինկի եւ Քրէյնի ծրագրով, Օսմանեան Կայսրութեան Փոքր Ասիոյ մասը երեք պետութեանց բաժնուելու էր, որոնցմէ մին հայկական պետութիւն մը: Այս պետութիւններուն հողատարը ԱՄՆ-ը պիտի ըլլար:

Նախազահ Ուելսըն արեւելեան Անատոլու եւ Հայաստան զրրկեց ամերիկեան նոր պատուիրակութիւն մը, գլխաւորութեամբ Զօր. ձէյմս Հարպըրտի, որուն պարտականութիւնն էր նշումներ ընել հայկական պետութեան սահմաններու առնչութեամբ, եւ քննել հոգատարութեան հարցը: Զօր. Հարպըրտ 1919 թ.ի ամառը Մերձաւոր Արեւելք այցելեց եւ պատրաստեց մանրամասն տեղեկագիր մը: Մինչ այդ՝ Երեւան հաստատուած էր Հայաստանի «Բարձր Գոմիսէր» նշանակուած ամերիկացի Գնդ. Ուելլիմ Հեւըլը:

Զօր. Հարպըրտի տեղեկագիրը աննպաստ էր Հայաստանի: Ան կը յայտնէր թէ ծրագրուած Հայաստանի մէջ հայերը մեծամասնութիւն չէին կազմեր, եւ առանձինն Հայաստանի վրայ հողատարութեան դադափարին դէմ էր: 1920 թ.ի Ապրիլին, Նախազահ Ուելսըն ամերիկեան ծերակոյտին կը փոխանցէ Հարպըրտի տեղեկագիրը: Նախազահ Ուելսընի հակառակորդները, ծերակուտական Հենրի Քեպլթ Լաճի ւ գլխաւորութեամբ, ամէն ջանք թափեցին ձախողեցնելու նախազահին ծրագիրները Հայաստանի նկատմամբ:

4. A. W. V. Temperley, A History of the Peace Conference, 1926, VI, p. 26.

Նախագահ Ուիլսոնն Հայոց ի նպաստ ելույթներ ունեցաւ: 26 Փետրուարի 1919 թ.-ին, Պոսթոնի մէջ իր արտասանած ճառին մէջ ի միջի այլոց կը յայտարարէր. «Մտածած էք երբեք Հայաստանի տառապանքներուն մասին: Դուք ձեր զրամը թափեցիք Հայոց օղնելու համար իրենց տառապելէն ետք. հիմա ուժը դրէք սրպէսդի անոնք այլեւս բնաւ չտառապին» (5):

Նոյնիմաստ ելույթներ ունեցան ամերիկեան ակաճաւոր քաղաքական գործիչներ, ինչպէս՝ Ուիլլիամ ձենինկզ Պրայըն, ԱՄՆ-ի Գերադոյն Ատեանի ղլխաւոր դատաւոր Չարլզ Էվանզ Հիւզ, ծերակուտականներ, երեսփոխաններ, կղերականներ եւ այլ անձնաւորութիւններ: 1919 թ.-ի Մարտի 9-ին, նախագահ Ուիլսոնն ստացաւ Հայոց ի նպաստ աղերսադիր մը, որուն տակ ստորագրած էին քառասունհինգ նահանգային կառավարիչներ, հարիւր եպիսկոպոսներ, երկու հարիւր յիսուն համալսարաններու եւ գոլէճներու նախագահներ եւ երկու հազար հինգ հարիւր կաթողիկէ ու բողոքական կղերականներ (6): Այլ խօսքով, ԱՄՆ-ի հանրային կարծիքը սկսած էր շարժիլ ի նրպաստ հայկական դատին:

Հայեր համակրանքով դարձած էին դէպի ԱՄՆ-ի ժողովուրդը, ու մեծ ակնկալութիւններով իրենց աչքերը սեւեռած էին նախագահ Ուիլսոնի: Վերսայի դաշնադրէն յուսախար մնալու նախադրացումով, 1919 թ.-ի Դեկտ.-ի 26-ին, Ամենայն Հայոց Կաթող. Գէորգ Ե., խնդրադիր նամակով մը դիմեց նախագահ Ուիլսոնի, որ «մինք եւ իւրաքանչիւր ամերիկացի օղնութեան հասնին Հայոց եւ Հայաստանին»: Կաթողիկոսական նուիրակ Յորէն Արք. Մուրատրեկեանց՝ վերոյիշեալ նամակը անձամբ կը յանձնէր նախագահ Ուիլսոնի: Բայց խոնդրագիրը ստանձնելէն չորս օր առաջ, նախագահը սկսեցած էր Ծերակոյտէն որ ԱՄՆ ընդունի Հայաստանի հոգատարութեան յանձնառութիւնը, այնպէս՝ ինչպէս առաջարկուած էր դաշնակիցներու՝ Սան Ռեմոյի խորհրդաժողովին կողմէ: 1920 թ.-ի Մայիսի 22-ին, ԱՄՆ-ի Ծերակոյտը Հայոց հանդէպ համակրանքի բանաձեւ մը քուէարկեց: Սակայն Հենրի Քեպլթ Լաճի ղեկավարած հոգատարութեան դէմ սայրքարը ձախողութեան մատնեց նախագահին առաջարկը, ու Ծերակոյ-

5. American Committee Opposed to the Lausanne Treaty, *The Lausanne Treaty, Turkey and Armenia*, New York, 1926.

6. Hearings before the Subcommittee on Future Foreign Policy Research and Development of the Committee on International Relations, House of Representatives, 94th Congress, Second session, Washington, 1976, p. 34.

տը՝ 1 Յունիսի 1920 թ.-ին, երկար վիճարանութիւններէ ետք, 23ի դէմ 52 ձայնով մերժեց ընդունիլ Հայաստանի հոգատարութիւնը: Երեւակոյտի 96 անդամներէն 26-ը բացակայած էին ժողովէն, եւ կամ՝ ձեռնպահ մնացած (7):

1920 թ.-ի Օգոստոսի 10-ին ԱՄՆ շմասնակցեցաւ Սեւրի դաշնաւերրի ստորագրութեան, որուն 89րդ յօդուածով, «Թուրքիա եւ Հայաստան, ինչպէս նաեւ միւս պայմանադիր բարձր կողմերը կը հաւանին Ամերիկայի նախագահին իրաւարարութեան յանձնել էրզրումի, Տրապիզոնի եւ Հայաստանի սահմանին որոշման խնդիրը, եւ ընդունիլ նախագահին որոշումով Հայաստանի ծով իջնելուն եւ վերոյիշեալ սահմանին յարակից բոլոր Օսմանեան հողերուն զինուորապէս չէզոքացման մասին պատրաստուած բոլոր տրամադրութիւնները»:

1920 թ.-ի ամբան, Սան Ֆրանսիսկոյի մէջ կայացած համադումարին, ԱՄՆ-ի Դեմոկրատ կուսակցութիւնը, նախագահ Ուիլսոնի խնդրանքով, իր նախագիծ-ծրագրին մէջ Հայաստանի մասին բանաձեւ մը որդեգրեց:

Բանաձեւը, որ իր սկզբնական ձեւին մէջ դրուած էր նոյն ինքն նախագահ Ուիլսոնի կողմէ, բացայայտ կերպով Հայանպաստ դիրքորոշումի մը արտայայտութիւնն էր: Սակայն, Մոնթանայի ծերակուտական Վալչի ընդդիմութեան պատճառով, բանաձեւը այլափոխուեցաւ, ու հայոց հանդէպ պարտաւորութիւններէ խուսափող տարազի մը տակ որդեգրուեցաւ համազումարին կողմէ (8):

Բանաձեւը կ'ըսէր. «Մեր խոր եւ իրաւ համակրանքը կը յայտնենք Հայաստանի դժբախտ ժողովուրդին, եւ կը հաւատանք թէ մեր կառավարութիւնը իր սահմանադրութեան եւ սկզբունքներուն հաւատարիմ, ամէն կարելի ու յարմար օժանդակութիւն պիտի ընծայէ իրենց (հայերուն, Չ. Մ.)՝ հիմնելու ու պահելու համար իրենց յատուկ կառավարութիւնը» (9):

ԱՄՆ-ի Հանրապետական կուսակցութիւնը, իր որդեգրած բանաձեւով Հայ ժողովուրդին հանդէպ իր համակրանքը կ'արտայայտէր, սակայն կը մերժէր հոգատարութեան հարցը:

1920 թ.-ի Նոյեմբերի 22-ին, նախագահ Ուիլսոն հրապարակեց

7. Հրաչիկ Սիմոնեան, Սփիւռքահայութիւնը Սոցիալ-Քաղաքական Պայքարի Ուղիներում, Երևան, 1968, էջ 580:

8. Dickran Boyajian, *Armenia, the Case for a Forgotten Genocide*, Westwood, N. J. 1972, p. 262.

9. Նոյնը:

իր՝ Ուիլսոնեան սահմաններով Հայաստանի քարտէսը, որ Սեւրի 89-րդ յօդուածով նշուած սահմաններէն 68·500 քառ. քիլոմեթր տարածութիւն մը կը սահմանէր հայոց, եւ այս՝ աշխարհի պահու մը, երբ Հայաստանի Հանրապետութեան գոյութիւնը վտանգուած էր քեմալականներու՝ Հայաստանի դէմ կազմակերպած ներխուժումին պատճառով: Ուիլսոնեան սահմաններով նախատեսուած Հայաստանը դատապարտուեցաւ թուղթի վրայ մնալու միայն:

Նախագահ Հարտինկ, նախագահ Ուիլսոնի յաջորդը, 1921 թ.ի Մայիս 30-ին յայտարարեց. «... Ես տակաւին ի նպաստ եմ Հայաստանի անկախութեան. ամերիկացի ժողովուրդը եւ ամերիկեան կառավարութիւնը իրենց կարելին կ'ընեն Հայաստանի վերաշինութեան» (10):

1921 թ.ի Նոյեմբերի 26-ին, նախագահ Հարտինկ յայտնեց թէ Կիլիկիոյ հարցը պետական քարտուղար Հիւզի ուշադրութեան յանձնած էր, եւ հաւաստիք ստացած, թէ Կիլիկիոյ հայերը զինուորական պաշտպանութիւն պիտի ստանան (11):

Սակայն կատարուած բոլոր յայտարարութիւնները խօսքի սահմաններէն անդին չէին անցնէր: Ասոր ի տես՝ Պերլինի մօտ ԱՄՆ-ի նախկին դեսպան ձէյմս ձերրթտ, նախագահ Հարտինկի յղուած 8 Նոյեմբերի, 1922 թուակիր նամակով մը կը մեղադրէր ԱՄՆ-ը, որ չէր յարգած իր խոստումները, եւ հիմնական ոչ մէկ օժանդակութիւն հասցուցած էր հայոց: Դեսպանը կը շեշտէր թէ մէկ ու կէս տարի անցած էր ծերակուտական Ուիլիսոնի 8 Սեպտ.ի 1919 թուակիր այն բանաձեւէն, որ կը լիազօրէր նախագահը զօրք ուղարկելու Հայաստան, եւ այդ ուղղութեամբ ոչ մէկ քայլ առնուած էր ցարդ: Տակաւին՝ դեսպան ձէյմս ձերրթտ կը յիշեցնէր նախագահ Հարտինկի, թէ ան, 1920 թ.ի Դեկտեմբերի 17-ին խոստացած էր իրեն որ պետական քարտուղարութիւնը դաշնակից պետութիւններուն յուշագիրներ պիտի ղրկէր, Սեւրի դաշնագրին հայոց վերաբերող յօդուածները յարգել տալու ստիպումով, եւ կը պահանջէր որ նախագահը դործադրէր խոստումը (12):

Նախագահ Հարտինկ Լոզանի խորհրդաժողովէն առաջ պատասխանելով դեսպան ձերրթտի, յայտնեց թէ «... Ամէն բան որ կարելի է ընել, պիտի ըլլայ, հայ ժողովուրդը պաշտպանելու եւ ա-

10. The Lausanne Treaty, Turkey and Armenia.

11. Նայնը:

12. D. Boyajian, Armenia, the Case..., p. 277.

նոր իրաւունքները՝ որոնք Սեւրի դաշնագրով տրուած էին, պահպանելու...» (13) :

Մինչ այդ, Մեծ եղեռնէն ետք Կիլիկիոյ մէջ քեմալականներու կազմակերպած ջարդերէն ու Իզմիրի աղէտէն վերապրած բազմահարիւր հայեր ԱՄՆ ապաստանած էին, մեծապէս բազմացնելով 1894-1896 թթ.ուն համիտեան կոտորածներէն ետք արդէն բազմացած ամերիկահայ վաղութը: Երբ ամերիկեան հանրային կարծիքի տարազումով՝ «սուլած հայեր»ը կայք կը հաստատէին ԱՄՆ-ի տարբեր շրջաններուն մէջ, ամերիկեան միսիոնարական կազմակերպութեանց երբեմնի աշխատանքի դաշտերը՝ Արեւմտեան Հայաստան, Կիլիկիա, Փոքր Ասիոյ եւ Իզմիրի շրջանները արդէն պարպուած էին հայութեան:

Ժամանակները սկսած էին փոխուիլ: Առեւտրական, տնտեսական, քարիւղային, եւ քաղաքական շահերու հետամուտ ամերիկացիներ, կ'ուղէին «իրապաշտ» քաղաքականութիւն մը վարել Մերձաւոր Արեւելքի մէջ: Թուրքիոյ համակիր անձնաւորութիւններ անհրաժեշտ կը նկատէին նոր փայլ մը տալ Թուրքիոյ անուան, որ այնքան տեղումնած էր հայոց հանդէպ թուրքերու վարած քաղաքականութեան պատճառով: Այս դժով կատարուած աշխատանքներէն յիշատակութեան արժանի է դեր-ծովակալ Քոլլի Մ. Չեսթրի թրքախոս գրութիւնը, որ լոյս տեսաւ ամերիկեան «Քրքրենթ Հիսթորի» թերթի 1922 թ.ի Սեպտեմբերի համարին մէջ: Վերոյիշեալ յօդուածին մէջ հեղինակը կը գրէ. «Քրիստոնեաներու մասին նախապաշարում չկայ Թուրքիոյ մէջ... աւելի պարկեշտութիւն կայ Թուրքիոյ մէջ՝ քան աշխարհի որեւէ ուրիշ երկրի մը մէջ... Միացեալ Նահանգներուն պատերազմ մտնելէն ետք՝ (Թուրքիա) դաշնակիցներուն պիտի միանար, եթէ... կարենար... Երկիր մը՝ որ ամերիկացի գործատէրերուն առջեւ կը բանայ դործի հսկայ կարելիութիւններ... Թուրքը աշխարհի ամենէն սխալ կերպով ներկայացուած անձն է... Հայերուն դէմ յոռեգոյն աղէտը պատահեցաւ 1915 թուին: Չանգուածային սեղահանութեանց պատճառը թուրքերուն այն վախն էր, որ եթէ այս օտար բնակչութիւնը (հայերը, Չ. Մ.) ազատ ճգուէր անխափան կերպով շարունակելու իր գործունէութիւնը, խոռվարարներուն (հայերուն, Չ. Մ.) դիմուն փորձանք պիտի բերէր ի վերջոյ... Այս ուստումներով, ուրեմն, հայերը տեղահանուեցան ոչ-ասպնջական շրջաններէն, ուր անոնց ներկայութիւնը անբաղձալի էր եւ հոն պէտք եղած չափով բարդաւաճելու կարելիութիւնը չունէին, եւ տարուեցան Սուրիոյ ամենէն դեղեցիկ եւ բարեբեր վայրերը... Լեռնա-

ընակաները առաջնորդուեցան Միջադեպը, ուր կլիման այնքան հաճելի է... եւ այս ամէնը (հայերու տեղահանութիւնը, Չ. Մ.) թուրքերը կատարեցին հսկայ աշխատանքով եւ ի դիմ նիւթակաւ մեծ զոհողութեանց: Մինչդեռ, արտասահման հասած լուրը այն էր որ հայերը, եթէ ոչ ամբողջութեամբ, դէթ մեծ մասամբ, կոտորուած էին... ժամանակ մը վերջ, տեղահանուածները (անոնք, որոնք կը փախաքին) վերադարձան, բոլորն ալ ողջ եւ առողջ, զիրցած ու բարդաւաճ վիճակով...» (14):

Անհաւատալի բայց իրաւ այս գրութեան հեղինակը՝ Հանդըստեան կոչուած ամերիկացի դեր-ծովակալ Գոլպի Մ. Չեսթըր, պատմական ճշմարտութիւններու ահաւոր նենդափոխում մըն է որ կ'ընէր, Լոզանի խորհրդաժողովի նախօրեակին: Լոզանի ամերիկեան պատուիրակներէն ծովակալ Մարք Պրիսթոլ նոյնպէս փութութեամբ տեսակէտներ ունէր:

1922 թ.ի Դեկտեմբերի 30-ին, Լոզանի խորհրդաժողովին, ԱՄՆ-ի պատուիրակը խօսեցաւ հայոց «ապաստան» մը տրուելու ի նպաստ: Սակայն յաջորդ օրն իսկ պատուիրակութիւնը խորհրդաժողովի շէնքին զեկուցատախտակին վրայ դետեղեց պաշտօնադէր մը, ուր կը յայտարարէր թէ նախորդ օրուան խորհրդաժողովի ընթացքին Հայաստանի մասին իր ունեցած արտայայտութիւնը «անպաշտօն» էր (15):

Թրքական «Վաքըթ» թերթը երախտագիտութեամբ դովարանեց ԱՄՆ-ի պատուիրակներէն ծովակալ Մարք Պրիսթոլի՝ թուրքերու ի նպաստ տարած աշխատանքները, ինչպէս նաեւ պատուիրակութեան անդամներուն որդեգրած թրքանպաստ դիրքը: Թերթը կ'աւելցնէր թէ հայոց ի նպաստ ամերիկեան արտայայտութիւնները կրօնական կաղճակերպութիւններու ճնշումին հետեւանքն էին (16):

Պոլիս հրատարակուող «Թեվհիտի Էֆըրա» թերթը կը զբէր որ եթէ արեւմտեան պետութիւնները իրապէս կ'ուղէին հայերը պաշտպանել ու պնդել հայկական ազգային օճախի տեսակէտին վերայ, կրնային խորհրդաժողովը ձախողեցնել, եւ քաշուիլ անկէ, այնպէս՝ ինչպէս զիրենք իսկապէս շահադրողող հարցերուն համար սպառնացին ընել (17):

14. Vice-Admiral Colby M. Chester, **Turkey Reinterpreted**, «Current History», Sept., 1922, pp. 939-947.

15. D. Boyajian, **Armenia, The Case...**, p. 279.

16. Նոյնը:

17. Նոյնը, էջ 280:

ԱՄՆ, որ չէր ստորագրած Սեւրի դաշնագիրը, դաշնակից պետութիւններու կողմէ հրաւիրուեցաւ մասնակցելու Լոզանի խորհրդարանական ժողովին, ուր վերատեսուեցան պիտի ենթարկուէր Սեւրի չիրագործուած դաշնագիրը: Խորհրդարանական ժողովը սկսաւ 1922 թ. Նոյեմբերի 20-ին. ԱՄՆ-ի կառավարութիւնը Լոզան ղրկեց Հոմի իր դեսպանը՝ Ռիչարտ Վաշպին Չայլտ, Կ. Պոլսոյ իր բարձր կոմիսարը՝ ծովակալ Մարք Պրիսթոլ, եւ Պերնի ամերիկեան ներկայացուցիչը՝ ձողէֆ Կրին:

Լոզանի խորհրդարանական ժողովի նիստի ընթացքին (12 Դեկտ. 1922 թ.) քննարկուեցաւ Հայկական Հարցը: Այդ նիստին՝ ԱՄՆ-ի պատուիրակ Չայլտ յիշատակեց իր ժողովուրդին ու կառավարութեան կողմէ հայ գաղթականներուն ցոյց տրուած օգնութիւնը, ու վերջիչեց հայոց տրուած հաւաստիքները՝ Սեւրի դաշնագրէն մինչեւ Ազգերու Լիկայի 22 Սեպտ. 1922 թ. որոշումը, եւ եզրակացուց.

«Ես չեմ ասում, թէ թուրքական պատուիրակութիւնը եւ Ազգային Ժողովը չեն գործում հանդուրժողականութեան, արդարութեան եւ հաշտութեան այն ոգով, որը Միացեալ Նահանգներն ու ամբողջ աշխարհը իրաւունք ունեն սպասելու: Բայց Միացեալ Նահանգների ժողովրդի անունից յամառօրէն պնդում եմ, որ այս խորհրդարանական ժողովը չպիտի չարտադրէ ցոյց տրուած քանի դեռ չի սահմանել մշտական համադրականութեան օգնութեամբ անպաշտպան զանդուածների համար ապաստան դնելու եղանակը, եւ քանի դեռ առանձին ազգային խմբերի համար չի ստեղծուել ըստ Հնարաւորին յուսալի հողային ապաստաններ, եթէ այդ խմբերը ցանկանում են անջատուել այն ազգութիւններից եւ այլ կրօնական ու ցեղային խմբերից, որոնց մէջ նրանք ապրում են» (18):

Մինչ այս, ԱՄՆ-ի մէջ հայանպաստ տրամադրութիւններով դիմումներ գրեցին կը հասնէին նախագահ Հարտինկի: Անոնցմէ մէկը, 6 Յունուարի, 1923 թուակիր, նախագահէն կը պահանջէր «Թուրքիոյ հետ յարաբերութիւնները չվերահաստատել, կամ՝ թոյլատրել իր քաղաքացիներուն որ Թուրքիոյ ելեմտական օգնութիւն ընեն, մինչեւ որ թրքական կառավարութիւնը ճանչնայ հայ ժողովուրդին իրաւունքը ազգային անկախ դոյութեան մը համար»: Դիմումները ընդհատուեցան ստորագրած էին ԱՄՆ-ի ապագայ նախագահ Ֆրանքլին Ռուզվելթ, ձէյմս ձերբրտ, Հենրի ձերբի, ու ասոնց կողքին, քաղաքական ու կրօնական քսան ինը սնձնաւորութիւններ (19):

18. Ջ. Կիրակոսեան, Հայաստանը Միջազգային Դիւանագիտութեան եւ Սովետական Արտաքին Քաղաքականութեան Թղթերում, Երևան, 1972, էջ 747:

19. The Lausanne Treaty, Turkey and Armenia.

Լոզանի մէջ, թրքական անդիջողութեան պատճառով համաժողովը ընդմիջուեցաւ 1923 թ.ի Փետրուարի 4-ին, վերսկսելու համար նոյն տարուան Ապրիլի 23-ին: Մինչ խորհրդաժողովը կը շարունակէր իր աշխատանքները, Իսմէթ Փաշա նամակ մը յղելով դեսպան Կրիմին, առաջարկեց բարեկամութեան ու առևտրական դործակցութեան դաշինք մը կնքել ԱՄՆ-ի եւ Թուրքիոյ միջեւ: ԱՄՆ ձեռնպահ մնաց 1923 թ.ի Յուլիսի 24-ին ստորագրուած Լոզանի դաշնագրին հանդէպ: Սակայն Իսմէթ Փաշայի եւ դեսպան Կրիմի միջեւ սկսած բանակցութիւնները հասան արգելներ, եւ, 1923 թ.ի Օգոստոսի 6-ին կնքուեցաւ ԱՄՆ-Թուրքիա բարեկամութեան ու առևտրական դործակցութեան դաշինքը (20):

Դեսպան ձերբրտ յայտարարեց թէ 1923 թ.ի Օգոստոսի 6-ին ստորագրուած ԱՄՆ-Թուրքիա դաշինքը «կ'անպատուէր ԱՄՆ-ը» (21):

Լոզանի դաշնագրին ստորագրութենէն ետք, տակաւին քանի մը տարիներ եւս ամերիկեան հանրային կարծիքը դէմ կը կենար Թուրքիոյ հետ բացայայտ դործակցութեան: Ասով կը բացատրուի այն պարագան թէ ինչու ԱՄՆ-ի Ծերակոյտը մերժած էր վաւերացնել Լոզանի մէջ կնքուած Ամերիկո-Թուրք անջատ պայմանագիրը, եւ Դեմոկրատ կուսակցութիւնը 1924 եւ 1928 թթ. ու նախագահական ընտրութեանց առիթով իր հրապարակած կուսակցութեան նախագիծ-ծրագրին մէջ յատուկ պարբերութիւն մը ունէր «Հայաստան» խորագրով: Տակաւին յիշողութիւններու մէջ թարմ էին հայկական ողբերգութիւնները, եւ դեր-ծովակալ Քոլպի Մ. Չեսթրի «Թուրքիա միբստին մեկնարանուած» յօդուածը հանրային կարծիք չէր ստեղծած:

1924 թ.ի Յունիսի 24-ին Դեմոկրատ կուսակցութեան որդերած նախագիծ-ծրագրին մէջ հայոց նուիրուած պարբերութիւնը կ'ըսէր. «Կը դատապարտենք Լոզանի դաշնագիրը: Ան առևտրական փոխանակում մը կ'ընէ ամերիկեան օրինական իրաւունքներու եւ կը դաւէ Հայաստանի, Չեսթրի քարիւղի մենաշնորհին համար: Մենք թիկունք կը կանգնինք Թուրքիոյ մէջ ամերիկեան իրաւունքներու պաշտպանութեան եւ նախագահ Ուելսընի Հայաստանը յարգող իրաւարարական վճիռին» (22):

20. «Current History», October, 1923.

21. James W. Gerard, **The Senate and the Lausanne Treaty**, «The New Armenia», September-October, 1923, as quoted by D. Boyajian, **Armenia, the Case...**, p. 478.

22. D. Boyajian, **Armenia, the Case...**, pp. 480-481.

ԱՄՆ-ի հանրային կարծիքին մօտ՝ Լոզանի դաշնադրին դէմ խմորուած տրամադրութիւններուն լաւադոյն դրաւականը կարելի էր նկատել այն դատապարտադիրը, զոր ստորագրած էին ամերիկացի հարիւր տասը բարձրաստիճան անձնաւորութիւններ: Ստորագրուեալները կը դատապարտէին Լոզանի դաշնադիրը, որպէս խորապէս «նուաստացուցիչ եւ աննպատակ դաշնադիր, որ կ'անդիտանայ Հայաստանի տրուած մեր (ԱՄՆ-ի, Ձ. Մ.) խոստումները... ԱՄՆ բացարձակապէս ոչինչ կը շահի Թուրքիոյ հետ յարաբերութիւններու վերսկսումով, եւ ոչինչ աւելի կը մնասէ սքաքուս-ֆուռն պահպանելով եւ սպասելով զարգացումներու...»: Ստորագրողներու մէջ էին անունները ԱՄՆ-ի պատերազմական նախարար Նիութըն Պէյքըրի, Մեսէչուսեց նահանգի կառավարիչ Ջենինկ Քոկի, Հարուըրտ Համալսարանի պատուոյ նախագահ Չարլըզ Էլլըթի, դեսպան Ճէյմս Ճերըրտի, դեսպան Հենրի Մորկընթաուի, Իտալիոյ մօտ ԱՄՆ-ի նախկին դեսպան Հարպըրթ Ճոնսոնի, Թուրքիոյ մօտ ԱՄՆ-ի նախկին դեսպան Օսքար Սթրաուսի, Բարբի Սթիվըն Վայդի, եւ այլ նահանգային կառավարիչներու, համալսարաններու եւ կըթական բարձրագոյն հաստատութեանց նախագահներու, ինչպէս նաեւ ականաւոր այլ դէմքերու (23):

1928 թ.ին, ԱՄՆ-ի Դեմոկրատ կուսակցութեան համադրումաբը «Հայաստան» խորագրով պարբերութիւն մը աւելցուց իր նախադիւծ-ծրագրին մէջ, որ կ'ըսէր. «Մենք հաւանութիւն ենք տալիս Միացեալ Նահանգների անկեղծ ջանքերին, որոնց նպատակն է կատարել այն խոստումներն ու պարտաւորութիւնները, որոնք համալսարհային պատերազմի տարիներին եւ նրանից յետոյ Միացեալ Նահանգների եւ դաշնակից տէրութիւնների կողմից տրուել են Հայաստանին եւ նրա ժողովրդին» (24):

Դեմոկրատ կուսակցութիւնը Նիւ Եորքի իր կեդրոնատեղիին մէջ ստեղծած էր նաեւ հայկական բաժանմունք մը, որ կ'աշխատէր յօգուտ իր նախագահական թեկնածուին՝ Սմիթի: Յիշեալ բաժանմունքը հայերէն լեզուով ընտրական կոչեր կը հրատարակէր, ու զանոնք կը տարածէր ամերիկահայ ընտրողներու շրջաններուն: Այդ կոչերէն մէկուն մէջ կ'ըսուէր. «Սմիթ թող ընտրուի, այնժամ Հայաստանը պիտի ազատուի» (25):

Սակայն շուտով յուշ դարձան բոլոր բանաձեւերն ու կոչերը: Թուրք-ԱՄՆ յարաբերութիւնները տակաւ բնականոնացման ճամբու

23. Նոյնը, էջ 481:

24. Հ. Սիմոնեան, Սփիւռքահայութիւնը..., էջ 492:

25. Նոյնը:

մէջ մտան: ԱՄՆ-ի հանրային կարծիքը յուզող այլ հարցեր կային հիմա: 1929 թ-ի ԱՄՆ-ի տնտեսական մեծ տաղնապը դիւսաւոր մը տահոգութիւնն էր բոլորին: Ռուզվելթ բարձրացած էր ԱՄՆ-ի նախադահութեան պաշտօնին: ԱՄՆ-ՍՍՀՄ դիւանագիտական յարաբերութիւնները հաստատուած էին: Թուրքիա մաս կազմած էր Ազգերու Լիկային: 1933 թ-ին, ամերիկահայութիւնը պառակտուած էր դրօշակի խնդրով, ու Ղեւոնդ Արք. Դուրեանի սպանութեամբ: Հայկական Դատը մինչեւ իսկ մոռացութեան տրուած էր ամերիկահայութեան կողմէ:

Համաշխարհային Բ. Պատերազմի ընթացքին պատրաստուած՝ 13 Յունիսի, 1946 թուակիր յոյժ զաղտնի մակազրեալ «Թուրքիա-Արտաքին Յարաբերութիւններ» խորադրեալ, Անդլիոյ Ֆորէյն Օֆիսի Ուսումնասիրութեանց Բաժանմունքի մէկ տեղեկագիրը, իր 22-րդ պարբերութեան մէջ կ'անդրադառնայ ԱՄՆ-Թուրքիա յարաբերութեանց.

«Միացեալ Նահանգները պարզօրէն յարաբերութիւնները խզեցին Թուրքիոյ հետ 1917 թ-ի Ապրիլի 20-ին, առանց երբեք պատերազմի մտնելու անոր դէմ: Անոնք չմասնակցեցան Թուրքիոյ զինադադարի հսկողութեան, բայց շատ մը շրջաններու մէջ Ամերիկեան կարմիր խաչը անգնահատելի օժանդակութիւն բերաւ: Լոզանի մէջ, անոնք անջատ համաձայնագիր մը ստորագրեցին: Իրենց շահերը կը կեղրոնանային դպրոցներու եւ միսիոններու վրայ: Թուրքիոյ շահը ԱՄՆ-ի հետ կը կեղրոնանար դիւսաւորաբար ելեւմտական օժանդակութեան յոյսով: Բայց ամերիկեան հանրային կարծիքը ցնցուած էր հայոց դէմ գործուած բարբարոսութիւններէն, եւ, դիւսաւորաբար ԱՄՆ-ի միսիոնարական փրօ-հայկական կազմակերպութիւններու ընդդիմութեան պատճառով, Մերակոյտը մերժեց Լոզանի մէջ ստորագրուած Թուրքօ-Ամերիկեան դաշնագիրը վաւերացնել: Միայն 1927-ին Վօսիւս վիվիսիտի-ի մը շուրջ համաձայնած էին: Թէեւ ամերիկեան տնտեսութիւնը Թուրքիայէն հեռու մնաց, ԱՄՆ, մինչեւ 1937 թ. միակ երկիրն էր, որուն առեւտրական հաշուեկշիւը Թուրքիոյ ի նպաստ էր: Թուրքերուն՝ Միացեալ Նահանգներու նկատմամբ ընդհանուր յարգանքը աւելցած է այն զգացումէն, թէ Ուաշինկթըն ոչ մէկ յետին ծրագիրներ ունի իրենց երկրին համար: Ուստի՝ անոնք հիւրընկալեցին ամերիկացի մասնադէտներ, ու իրենց փափաքը յայտնեցին անկլօ-սաքսոն դաստիարակութեան եւ անգլերէն լեզուին դառնալու՝ եւ խնայեցին ամերիկեան դպրոցներուն իրենց ազգայնական նոր կանոններու ամբողջ զօրութիւնը» (26):

Համաշխարհային Բ. Պատերազմին, մանաւանդ 1941 թ.-ի Դեկտեմբերին, ԱՄՆ-ի պատերազմ մտնելէն ետք, Թուրքիոյ մէջ ամերիկեան քաղաքականութիւնը աւելի դործօն եղաւ, ու Թուրքիա «Լենտ-Լիդ»-ի հայթայթումներ ստացաւ :

Շնորհիւ Չըրչիլի վարած դիւանագիտութեան, Թեհրանի ժողովը (Նոյեմբերի 28 - 1 Դեկտեմբերի, 1943 թ.) քանի մը անգամ ըզբաղեցաւ Թուրքիոյ հարցով : Չըրչիլ յայտարարեց թէ որպէս կարեւոր խնդիր պէտք է «Թուրքիան համոզենք մտնելու պատերազմի» : Ստալին կասկած յայտնեց թէ Թուրքիա պատերազմի կը մտնէ, որքան ալ ճշում գործադրուի վրան, սակայն համոզելու փորձի մը համամիտ գտնուեցաւ, պայմանով որ Թուրքիա «խաղ չխաղայ մեր ու Գերմանիոյ միջեւ» : Նախագահ Ռուզվելթ իր կարգին յայտնեց թէ ինք եւս կողմնակից է որ ստիպեն Թուրքիան պատերազմի մտնելու, բայց կը կարծէր, թէ Թուրքիա ատոր համար սուղ դին պիտի պահանջէ, եւ «Օվըրլորտ» գործողութեան վնաս հասցնէ : Ռուզվելթ՝ 1 Դեկտեմբերի նիստին յայտարարեց որ եթէ Թուրքիա (27) պատերազմի մտնէ եւ յարձակման ենթարկուի դերմաններու կողմէ, ինք պէտք է զոչը ըլլայ Թուրքիոյ խոստումներ տալու մէջ (28) :

Պատերազմի ընթացքին Թուրքիոյ նախագահ Իսմէթ Ինէօնիւ 4 եւ 7 Դեկտեմբերի 1943 թ.-ին տեսակցեցաւ ԱՄՆ-ի նախագահ Ռուզվելթի եւ Մեծն Բրիտանիոյ վարչապետ Չըրչիլի հետ : Ինէօնիւ նախքան Գահիրէ երթալը, վարլըֆ վերկիսիի պատճառով հայ եւ այլ փոքրամասնութիւններու պատկան աքսորեալներէն վերապրողները Պոլիս վերադարձուց (29) : Արեւմտեան դաշնակից երկու ղեկավարները չկրցան համոզել Ինէօնիւն որ Թուրքիան միանայ նացիզմի դէմ մղուող պատերազմին :

Համաշխարհային Բ. Պատերազմի վերջերուն, դաշնակից պետութիւնները յաճախակի հանդիպումներ կ'ունենային, ոչ միայն պատերազմը շուտով յաջող աւարտի մը բերելու, այլ եւ պատերազմէն ետք, կռիւններու ընթացքին դաշնակից ու գործակցող պետութիւններու մասնակցութեամբ վերստեղծելու «Աղղերու Լիկա»-ի նման նոր համալսմբում մը : Այսպէս, երբ 1944 թ.-ի Օգոստոս - Սեպտեմբեր ամիսներուն, Տամպլըթըն Օքսի մէջ սկսան Միացեալ Ազգերու Կազմակերպութեան (ՄԱԿ) նախապատրաստական աշխա-

27. Թեհրան, Եալթա, Պոտսդամ, փաստաթղթերի ժողովածու, Երևան, 1970, էջ 17 :

28. Նոյմբ, էջ 51 :

29. Lewis V. Thomas and Richard N. Frye, *The United States and Turkey and Iran*, Camb., Mass., 1952 p. 98.

տանճները, ու քննարկուեցան անդամակցութեան հարցերը, Սով. Միութիւնը առաջարկեց Միութեան անդամ 16 հանրապետութիւնները (որոնց շարքին եւ Սով. Հայաստանը), ընդունել որպէս ՄԱԿ-ի հիմնադիր անդամ, քանի որ անոնք, գործնականապէս, իրենց ղինեալ ուժերով մասնակցած էին նացիզմի ու Փաշիզմի դէմ մղուող պատերազմին: ԱՄՆ եւ Մեծն Բրիտանիա ընդդիմացան Սով. Միութեան այս առաջարկին (30):

Վերոյիշեալ հարցը վերստին քննարկուեցաւ Եալթայի խորհրդաժողովին: 7 Փետրուարի 1945 թ.ի նիստին, Սով. Միութիւն, իր՝ Տամպլթընի Օքսի բանաձեւը բարեփոխելով առաջարկեց որ եւրեք, կամ դոնէ երկու սովետական հանրապետութիւններ գտնուին ՄԱԿ-ի հիմնադիր անդամներու շարքին մէջ: Սով. Միութիւն ի մտի ունէր Ուքրանիան, Պելոուսիան եւ Լիտվիան (31):

Սակայն ԱՄՆ-ի նախագահ Ռուզվելթ իր մտալախութիւնը յայտնեց նմանօրինակ առաջարկի մը հանդէպ, բացատրելով թէ ընդառաջելով Սովետական Միութեան ծրագրին, խախտած կ'ըլլայ այն սկզբունքը, որուն համաձայն կաղմակերպութեան իւրաքանչիւր անդամ միայն մէկ ձայնի իրաւունք պէտք է ունենայ: Ապա հարցը փոխադրուեցաւ խորհրդակցող պետութիւններու արտաքին գործերու նախարարներու ժողովին: Ի վերջոյ որոշուեցաւ ՄԱԿ-ի հիմնադիր անդամ ընդունել, բացի Սովետական Սոցիալիստական Հանրապետութիւններու Միութենէն, Ուքրանական եւ Պելոուսական Սովետական Սոցիալիստական Հանրապետութիւնները (32): Այսպէս՝ Հայկական ՍՍՀ-ը դուրս կը մնար ՄԱԿ-ի հիմնադիր անդամներու շարքէն:

Եալթայի 8 Փետրուարի, 1945 թ.ի նիստին, Չըրչիլ ճիւղ չըխնայեց համողելու ժողովականները որ Թուրքիան եւ ՄԱԿ-ի հիմնադիր անդամ դառնայ, եղբակացնելով թէ «հարկ չկա՞ր արդեօք թուրքերին հնարաւորութիւն տալ՝ զղջալու մահուան մահճում» (33): Ստալին համամիտ գտնուեցաւ առաջարկին, պայմանով որ մինչեւ Փետրուարի վերջը Թուրքիա պատերազմ յայտարարէ Գերմանիոյ դէմ: Ռուզվելթ եւ Չըրչիլ համաձայնեցան:

Մետասանբորդ ժամուն, 1945 թ.ի Փետրուարի 23-ին, Թուրքիան պատերազմ յայտարարեց Գերմանիոյ դէմ: ՍՍՀՄ-ը,

30. Sydney Marcuse, *Russia, A History*, Chicago, 1956, p. 627.

31. Թեհրան, Եալթա, Պոստդամ, էջ 126:

32. Նոյմը, էջ 166-167, 180:

33. Նոյմը, էջ 187:

պատերազմի ընթացքին թուրքիոյ վարած «չէզոք» ուժեան քաղաքականութենէն դու չէր մնացած: Արդարեւ՝ թուրքիա, Սով. Միութեան վրայ Գերմանիոյ կատարած ներխուժումէն չորս օրեր առաջ, 1941 թ.ի Յունիսի 18-ին, Գերման եւ թուրք «ոչ յարձակման» պայմանագիրը ստորագրած էր: Տակաւին՝ թուրքիա քաջալերած էր Ս. Միութիւնը անդամահատել ուզող Փան-թուրքիստ շրջանակները, մեծ թիւով զօրք կեդրոնացուցած էր Սովետ. Միութեան հետ իր ունեցած սահմանին վրայ, եւ նոյնիսկ, ինչպէս յետ պատերազմեան վաւերաթուղթերը (34) հաստատած էին, 1942 թ.ի Նոյեմբերին, երբ Պերլին յայտարարեց Ստալինկրատի անկումը, ծրագրած էր Արաքսի միւս ափը անցնիլ, եւ Անդրկովկասը իրեն ենթարկելով տիրանալ Պաքուի նաւթահորերուն: Աւելին, թուրքիա թոյլ տուած էր որ Գերմանիան, ի վնաս դաշնակիցներուն, լրիւ օգտագործէ թուրքիոյ հողամասը լրտեսական գործունէութեանց համար, արտօնած էր քրոմի եւ այլ նիւթերու արտածումը դէպի Գերմանիա, եւ դերման նաւերու անցքը նեղուցներէն դէպի Սեւ ծով, հակառակ Մոնթրէոյի՝ նեղուցներու վերաբերեալ համաձայնագրին:

Այս բոլորին դէմ յանդիման, եւ համաձայն պատերազմի վերջին շրջանի սովետական ընդհանուր քաղաքականութեան ծրագրերներուն՝ Սովետ եւ թուրք բարեկամութեան դաշնագիրը (կնքուած՝ 17 Դեկտեմբերի 1925 թ.ին, Փարիզի մէջ) Սով. Միութեան կողմէ չեղեալ համարուեցաւ 1945 թ.ի Մարտի 19-ին: Իսկ Փոքտամի համաժողովէն քանի մը շաբաթ առաջ, Անգարայի մօտ Սով. Միութեան դեսպանը՝ Վինոկրատով, 1945 թ.ի Յունիսի 22-ին, թրքական կառավարութեան յայտնեց թէ իր կառավարութիւնը պատրաստ էր բարեկամութեան նոր դաշնագիր մը կնքելու թուրքիոյ հետ, եթէ նեղուցներու վերհսկողութեան վերաբերեալ Մոնթրէոյի համաձայնագիրը, ըստ որոշ պահանջներու, վերատեսութեան ենթարկուէր, եւ եթէ՝ Կարս, Արդուին եւ Արտահան վերադարձուէին ՍՍՀՄ-ի, քանի որ այդ շրջանները պատմականօրէն կը պատկանէին Հայաստանի եւ Վրաստանի (34):

ԱՄՆ-ի նախագահ Հերրի Թրումընի յուշերուն համաձայն, Փոքտամի համաժողովին (Յունիսի 17-2 Օգոստոսի, 1945 թ.)՝ երբ, թուրքիոյ հարցը քննարկուած էր, Չըրչիլ յայտնած էր թէ ՍՍՀՄ-ի արտաքին գործաւար Մոլոթով՝ Մոսկուայի մէջ թուրքիոյ դեսպա-

34. Ռ. Գ. Սահակեան, Սովետա-թուրքական Յարաբերութիւնների Գատմութեան Հակադիտական Լուսարանումը Ժամանակակից Թուրք Գատմաբանութեան Մէջ, Երևան, 1964, էջ 96:

նին խօսած էր «Թուրքիոյ արեւելեան սահմաններու փոփոխութեան» մասին, ինչ որ ահազանդի մատնած էր Թուրքիան: Մոլոթով ժողովին բացատրեց թէ «1921 թ.ին, սովետական հողեր առնուած էին Սով. Հայաստանէն եւ Սով. Վրաստանէն, եւ ինք պնդած էր թէ այդ խնդիրը պէտք էր կարգադրուէր նախքան (Սովետ եւ Թուրք) զինակցութիւն կնքուիլը»: Իսկ Ստալին աւելցուցած էր թէ «Թուրքերուն վախը կը ծնի ճշդումէն այն սահմաններուն, որոնք գոյութիւն ունէին ցարական կառավարութեան օրերուն: Ստալին յայտարարեց թէ ինք նկատի ունէր Կարսը, որ նախապէս Հայաստանի մաս կը կազմէր, եւ Արտահանը, որ նախապէս Վրաստանի մաս կը կազմէր, եւ շեշտեց թէ սահմանի փոփոխութեան հարցը պիտի չարժարձուէր, եթէ Թուրքերը Սով. Միութեան հետ զինակցութիւն մը թելադրած չըլլային: Զինակցութիւն մը կ'ենթադրէր որ երկու երկիրները իրենց միջեւ եղած սահմանները պիտի պաշտպանէին, եւ թէ՛ սովետներու կարծիքով, յիշեալ շրջանի սահմանները ճիշդ չէին, եւ թէ՛ իրենք Թուրքերուն ըսած են՝ թէ սահմանները պէտք է սրբազրուէին զինակցութեան մը պարագային: Եթէ այս մէկը Թուրքերուն հաճելի չէ, զինակցութիւնը կը լքուի: Ան (Ստալին, Զ. Մ.) կ'ուզէր զիտնալ թէ ասոր մէջ ի՞նչ վախնալիք բան կար» (36):

Հայութեան մեծ երազին իրականացման ճանապարհին վրայ պատմական առիթ մը գտած ըլլալու յոյսով, սփիւռքահայութիւնը ձեռնարկած էր աշխատանքի: Հայ քաղաքական բոլոր կազմակերպութիւնները, անջատարար, եւ միատեղ, յուշագրերով կը ներկայանային Սան Ֆրանսիսկոյի ՄԱԿ-ի ընդհանուր ժողովին, ինչպէս նաեւ Մեծ Տէրութիւններու, ու անոնց արտաքին գործոց նախարարներու համաժողովին:

Սով. Միութեան սահմաններուն մէջ, Հայկական ՍՍՀ-ի կառավարութիւնը, Կոմկուսի Ա. քարտուղար Գրիգոր Յարութիւնեան, եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Զ., սկսած էին առաջ քշել հայկական պահանջները:

ԱՄՆ-ի մէջ կազմուած Հայկական Իրաւանց Պաշտպանութեան Ամերիկեան Յանձնախումբը, բաղկացած ութսուն հինգ անդամներէ, որոնց մէջ՝ ամերիկացի քաղաքագէտներ, եկեղեցականներ, աւանաւոր արուեստագէտներ ու մշակոյթի գործիչներ, 1946 թ.ի Փետրուարի 21-ին, Լոնտոնի մէջ գումարուող ժողովին առիթով, ՄԱԿ-ի ամերիկեան պատուիրակութեան անդամներուն ուղղուած հեռագրով մը «ծանուցած էր իր պաշտպանութիւնը ի նպաստ աւելի քան

մէկ միլիոն Հայ տարազիրներու եւ անոնց զաւակներուն բաղձանքներուն իրազործման, որոնք ի սփիւռս աշխարհի, կը պահանջեն իրենց Հայրենիքին ընդարձակումը, որպէսզի հոն կարենան վերահաստատուիլ:

«Այս յայտարարութիւնը մասնաւորապէս կը վաւերացնէր Ամերիկայի Հայ Ազգային Խորհուրդի խնդրանքը, որ ուղարկուած էր Միացեալ Ազգերու Կազմակերպութեան ընդհանուր ժողովին, Հայցելով որ 1920 թ.ի Դաշնակից Պետութեանց Գերագոյն Խորհուրդի խնդրանքով, նախագահ Ուուարթ Ուիլսոնի կողմէ Հայաստանի հողային իրաւարարութեան մասին տրուած վճիռը նպաստաւոր նըկատառութեան արժանանար միջազգային հեռապատկերով» (37):

Այս հաղորդագրութիւնը ղրկուած էր ԱՄՆ-ի պետական ենթաբարտուղար Էտուրթ Ու. Սթեթիւնս Կրտսերին, Լոնտոն, եւ յանուն յանձնախումբին զայն ստորագրած էին իբր Ատենայպետ՝ Էտուրթ Սմիթ, եւ քարտուղարը՝ Վեր. Ռապըթ Ու. Սըրլ:

Ամերիկեան այս մարմինը 1946 թ.ի Ապրիլի 28-ին, Նիւ Եորքի Գառնեկի Հոլլին մէջ կազմակերպեց մեծ հաւաքոյթ մը ի նպաստ Հայկական Դատին: Հաւաքոյթին խօսք առին ծերակուտական Չարլըս Թոպի, Ներկայացուցիչներու Տան անդամներ՝ Սեյլըր, Սեյֆէյճ, Վեր. Սըրլ եւ ուրիշներ: Հայոց տարած ջանքերուն շնորհիւ 20.000 ամերիկացի կղերականներ Հայկական Դատին ի նպաստ կոչ մը ստորագրեցին (38):

Հակառակ տարուած բոլոր ճիղերուն, միջազգային քաղաքական նորաստեղծ կացութիւնը պայմաններ չէր շնորհեր Հայկական Դատին համար: 1946 թ.ին սկսած էր ցուրտ պատերազմը Սով. Միութեան եւ Արեւմտեան աշխարհին միջեւ: 1946 թ.ի Մարտին, Մեծն Բրիտանիոյ նախկին վարչապետ Չըրչիլ, Ֆուլթինի մէջ արտասանած իր ճառի ընթացքին Սով. Միութեան սահմանը բնորոշեց որպէս «երկաթէ վարագոյց»: 1946 թ.ի Օգոստոսի 19-ին, ԱՄՆ-ի կառավարութիւնը Սով. Միութեան յստակացուց իր կեցուածքը Տարտանեկի նեյուցներու հարցին նկատմամբ:

1947 թ.ի Ապրիլի 30 - Մայիսի 6, Նիւ Եորքի մէջ գումարուեցաւ Համաշխարհային Հայկական Գոնկրեսը, որուն, քսան երկու տարբեր երկիրներէ, 715 պատգամաւորներով իրենց մասնակցութիւնը բերին Ռոմիկալար Աղասական եւ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութիւնները. Հայ Հումանիտարները, Հ. Բ. Ը. Միութիւնը եւ

37. «Ձարքօմֆ» (օրաթերթ), Պէյրութ, 21 Փետրուարի, 1970, էջ 3:

38. Գերսամ Ախարոնեան, Մեծ Երազի ծածրուն Վրայ, Պէյրութ, 1964,

Հայրենակցական միութիւններ: Գոնկրեսը ղեկավարում է ՄԱԿ-ին, պահանջեց որ Ուելսընի սահմանադրումով յայտարարուած Հայկական հողամասերը վերադարձուին Հայկական Ս Ս Հանրապետութեան: ՄԱԿ-ը՝ իր սրբեզոյթած սահմանադրութեան բնոյթով իսկ դժուար թէ կարենար քննարկել նման պահանջը մը: Միջազգային քաղաքական պայմանները ձեռնուռ չէին Հայկական Հարցը սեղան բերելու, տակաւին՝ հարցը ներկայացնող պետութիւն մըն ալ չկար:

Համաշխարհային Հայկական Գոնկրեսի խորհրդատոյիէն առաջ իսկ, 1947 թ-ի դարնան, ԱՄՆ-ի նախագահ Հերբի Թրումըն հրապարակած էր իր անունը կրող «վարդապետութիւնը» եւ անով՝ երաշխաւորած Յունաստանի եւ Թուրքիոյ հողային ամբողջականութիւնը: Նոյն ժամանակամիջոցին, ԱՄՆ եւ արեւմտեան աշխարհի իր բարեկամները՝ մտահոգ Արեւելեան Եւրոպայով, Յունաստանով, Հիւսիսային Պարսիաստանով ու Թուրքիայով, լծուած էին «համայնավարութեան ծաւալումը զսպելու» քաղաքականութեան:

«Թրումընեան Վարդապետութեան» հռչակումէն ետք, երբ Հայկական Գոնկրեսի կողմէ պատուիրակութիւն մը՝ 1947 թ-ի Մայիսի 12-ին ԱՄՆ-ի պետական շարտուղար Տին Էչիսընի ներկայացուած Հայկական Հարցին առնչութեամբ, Տին Էչիսըն իրենց խօսեցաւ. «այն մեծ յժուարութեանց մասին, որոնք կային հայոց խնդրոյն լուծման ճամբուն վրայ, ԱՄՆ-ի կառավարութեան քաղաքական ուղղութեան տեսակէտէն» (39):

1947 թ-ի Մայիսի կէսերուն, ԱՄՆ-ի Գոնկրեսը զանազան երկիրներու 400 միլիոն տուարի ւիճակորական եւ անտեսական օգնութեան ծրարիր մը վաւերացուց, որուն 100 միլիոն տուարը նշանակուած էր Թուրքիոյ: 1947 թ-ի Մայիսի 2-ին, Միջերկրական ծովու ամերիկեան նաւատորմիդէն միաւորներ Իսթանպուլ այցելեցին, եւ Յունիսին՝ ամերիկեան զինուորական առաքելութիւն մը եկաւ Թուրքիա (40): Եւ այս՝ սկիզբն էր դալիք տարիներու ընթացքին Թուրքիոյ կատարուելիք օժանդակութեան:

1952 թ-ին Թուրքիա անդամակցեցաւ Հիւսիսային Ատլանտեանի Ուխտին (ՆԱՌՕ), իսկ 1954 թ-ին՝ Պաղատի Ուխտին (ՍԵՆՌՕ):

1947-1963 թթ-ու միջոցին, որպէս նուէր, պարտք եւ կամ ըստ պատգիմման համար տրուած յատկացում, ԱՄՆ-ի՝ Թուրքիոյ կատարած օժանդակութեան դումարը 4.352 միլիոն տուար էր, որուն

39. Նոյնը, էջ 199:

40. Charles Warren Hostler, *Turkism and the Soviets*, London, 1957. p. 187.

2.488 միլիոն տոլարը՝ սպառազինման համար: Եւ այս բոլորին փոխարէն՝ Թուրքիա արտօնեց որ ԱՄՆ զինուորական խարխախներ հաստատէ իր հողամասին վրայ (41):

ԱՄՆ դուռ էր որ Կարսն ու Արտահանը չէին կցուած ՍՍՀՄ-ի: 1957 թ.ի աշնան, Թուրքիոյ նախարարձակ ծրագիրներուն դէմ Սուրիոյ ներկայացուցած բողոքը քննարկելու համար հաւաքուած Ապահովութեան Խորհուրդի նիստին, ՄԱԿ-ի մօտ ԱՄՆ-ի դեսպան շէնրի Գապըթ Լաճ ձիւնիլըրի արտասանած խօսքերը լաւագոյն զբաւականն են վերոյիշեալ հաստատումին: ԱՄՆ-ի դեսպանը յայտարարելէ ետք թէ «ԱՄՆ հիացումով կը խոնարհի» Գորէայի մէջ «Թուրք զինուորներու» ցուցաբերած «քաջ ծառայութեանց» առաջ, կ'աւելցընէ թէ «ՄԱԿ կրնայ հպարտ ըլլալ Թուրքիայով»: Տակաւին՝ իր այս նոյն հաստատումին մէջ, շէնրի Գապըթ Լաճ կրկին անդամ ուրախութեամբ կ'ընդգծէ «ձախողութիւնը Սուլ. Միութեան պահանջքին, որ Թուրքիա՝ ՍՍՀՄ-ի զիջի Կարս եւ Արտահան նահանգները» (42):

Կարելի է ըսել թէ 1947 թ.էն սկսած մինչեւ ԱՄՆ-ի եւ ՍՍՀՄ-ի յարաբերութեանց բարելաւումը (1961 թ.), ԱՄՆ-ի համար Հայկական Հարց կը նշանակէր Սուլ. Հայաստանի՝ Սուլ. Միութեան նախաձեռնումը, եւ ոչ թէ Արեւմտեան Հայաստանի ազատագրումը: Իսկ 1953 թ.ին, ՍՍՀՄ արդէն իսկ հրաժարած էր Կարսի ու Արտահանի շրջաններուն համար ներկայացուցած իր պահանջքէն:

Յուրտ պատերազմի շրջանին, ԱՄՆ-ի կառավարութիւնը եւ անոր պատկան սպասարկութիւնները, մեկնելով իրենց հակահամայնավար եւ հակասովետ քաղաքականութեանէն, քաջալերեցին ՍՍՀՄ-ի դէմ խմորուող խմբակցութիւններու կազմաւորումը: 1952 թ.ի Հոկտ.ի 16-ին, Ռուսիոյ նախկին վարչապետ Ա. Քերենսքիի ղեկավարութեամբ՝ ԱՄՆ-ի մէջ ստեղծուեցաւ «Հակաբուլղարիկեան Պայքարի Համակարգող Կեդրոն»ը, որ կը նպատակադրէր սովետական կառավարութեան տապալումը, վարչաձեւին փոփոխութիւնը, պահելով մէկտեղ Սուլ. Միութեան հողային ամբողջականութիւնը (43): Սակայն, վերոյիշեալ քաղաքական վարքագիծը իրենց հետապնդած նպատակներուն հետ հաշտ չգտնելով, հակասովետ որոշ խմբակցութիւններ, 1953 թ.ին, Միւնիխի մէջ հանդիպելէ ետք, հիմը դրին «Բարիգեան Պլոք»ին, որ կը նպատակադրէր Սուլ. Միութեան լու-

41. «L'Orient», Beyrouth, 29 Avril, 1965.

42. **Soviets Plot War Scare**, U. S. I. S. pamphlet, distributed in Beirut, 1957, pp. 3-4, 5, 7.

43. Հ. Սիմոնեան, *Սփիւռքահայութիւնը...*, էջ 463:

ծարքը եւ ազգային շրջաններուն անջատումը անկէ (44) : Այս պլո-
քին անդամակցեցաւ նաեւ Հ. Յ. Դաշնակցութիւնը (45) :

ԱՄՆ-ի կառավարութիւնը կ'աջակցէր սոյն պլոքի զործունէու-
թեան, որուն տրամադրութեան տակ կը դրուէր Միւնիխի «Ազատ
Եւրոպա» ձայնասփիւռի կայանը :

ԱՄՆ-ի Գոնկրեսը, այդ նոյն ժամանակամիջոցին ստեղծած էր
«Բուլշեվիկեան Գրաւումներու Քննիչ Յանձնաժողով»ը, որ Նիւ Եոր-
քի մէջ կայացուցած իր հերթական նիստերէն մէկը (13 Հոկտեմբե-
րի, 1954 թ.) նուիրած էր Հայաստանի մէջ սովետական իշխանու-
թեան յաղթանակի պայմաններուն «ուսումնասիրութեան» : Այս նիս-
տին վկայութիւն տալու հրաւիրուած էին Դրոյ Կանայեանը, Ռուբէն
Դարբինեանը, Բեզլար Նաւասարդեանն ու Վարդգէս Ահարոնեանը
(46) :

Յուրտ պատերազմի ամենէն բուռն օրերուն, 1959 թ.ի Յուլիսի
17-ին, երկու տարի տեւած քննարկումէ ետք, ԱՄՆ-ի 83-րդ Գոնկ-
րեսը ընդունեց «Գերեալ Ազգերու Մասին» որոշումը, որ օրէնքի ուժ
ստացաւ նոյն Գոնկրեսի կողմէ ընդունուած թիւ 86-90 օրէնդրու-
թեամբ : Մինչ այդ արդէն ստեղծուած էր «Գերեալ Ազգերու Վեհա-
ժողով»ը : Գոնկրեսի թիւ 86-90 որոշումէն ետք, նախագահ Այզըն-
հաուըր իւրաքանչիւր տարուայ Յուլիս ամսուան երրորդ շաբաթը
յայտարարեց «Գերեալ Ազգերու Շարաթ» : Գոնկրեսի որոշումը տա-
րածուած էր Արեւելեան Եւրոպայի ընկերվարական պետութիւննե-
րուն, եւ Սով. Միութեան պալթեան երեք հանրապետութիւններուն
վրայ : Անդրկովկասեան հանրապետութիւնները մաս չէին կազմեր
այդ նախադիմով սահմանուած «գերեալ ազգեր»ու շարքին (47) :

Նախագահ Քեննեդիի երդման արարողութեան հրաւիրուելու
առիթով, «Հայրենիք»ի հայերէն եւ անլիբերէն թերթերու խմբագիր-
ներ՝ Ռուբէն Դարբինեան եւ Ճէյմս Թաշճեան, նախագահ Քեննեդիի
ուղղած իրենց շնորհաւորական նամակին մէջ ի միջի այլոց կը դը-
րէին. «Համոզուած ենք, որ Ձեր կառավարութիւնը, Հայաստանի
նման դերի դարձած երկիրներու դատին հանդէպ ալ ցոյց պիտի տայ
այն ազնիւ վերաբերումը, որուն կ'արժանանան ազատ աշխարհի նո-
րագատ ազգերը» (48) :

44. Նոյնը, էջ 467 :

45. Sarkis Atamian, **The Armenian Community**, New York, 1955,
p. 457.

46. Հ. Սիմոնեան, *Սփիւռքահայութիւնը...*, էջ 468 :

47. Նոյնը, էջ 473-474 :

48. «Նոր Օր» (Եւրոպայ), Գալիֆոքմիս, 28 Մարտի, 1961 :

Այսուհաղերձ սառցահալը սկսած էր երկու զերհզոր տէրութեանց միջեւ: «Սաղաղ համակեցութեան» զաղափարը սկսած էր հող չահել: Այդ շրջանին ԱՄՆ-ի պետական քարտուղար Տին Ռասք, Գոնկրեսի մէջ Դեմոկրատ կուսակցութեան նախագահ Հաուըրտ Սմիթին ուղղած իր 25 Նոյեմբերի, 1961 թուակիր նամակին մէջ որոշապէս իր մտահոգութիւնը կը յայտնէր, երբ կը զրէր թէ «գերեալ ազգեր»-ու շուրջ բարձրացած աղմուկը «աննպաստ կերպով կարող է անդրադառնալ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականութեան վրայ, եւ որ յատկապէս անիմաստ է դնել Ուըրանիոյ, Հայաստանի եւ Վրաստանի ազատագրութեան հարցը, որոնք աւանդական մասերն են Սովետական Միութեան» (49):

Տին Ռասք կը յայտարարէր. «Նախագահն (Քենեդին, Չ. Մ.) ու ես յայտնեցինք այն համոզումը, թէ Պեռլինի, Գերմանիոյ եւ Կեդր. Եւրոպայի խնդիրները վերջնական լուծումը տեղի կ'ունենայ այդ ժողովուրդները ինքնորոշումով: Սակայն Միաց. Նահանգները կառավարութեան դիրքը տկարանում է այն քայլով, որ չփոթում է նախապէս անկախ ժողովուրդները եւ ազգերը իրաւունքը հողային տարածութեան գոյափոխակի հետ, ինչպէս են Ուըրանիան, Հայաստանը կամ Վրաստանը, որոնք աւանդական մասերն են Սովետական Միութեան: Այս վերջինների նկատմամբ Մ. Նահանգների կառավարութիւնը այնպիսի անբաղձալի կացութեան է ենթարկում, որով կարծես թէ ջատագովում է մի պատմական պետութեան անդամահատութիւնը» (50):

1962 թ.ի Յուլիսին, պետական քարտուղար Տին Ռասք իր ելույթներէն մէկուն ընթացքին ընդգծեց որ Գոնկրեսի 1959 թ.ի «Գերեալ Ազգերու Մասին» որոշումը «չպէտք է ոչ մի դէպքում տարածել անդրկովկասեան երկու ազգերի՝ հայերի ու վրացիների, ինչպէս նաեւ ուկրաինացիների վրայ» (51):

Հանրապետական կուսակցութեան Ազգային Կոմիտէն, այս տեսակէտէն ղեգոհ, յայտարարութեամբ մը հանդէս եկաւ, թէ դեմոկրատներէն անկախ եւ անոնց կամքին հակառակ, ինք աշխատանք կը տանի Ներկայացուցիչներու Տան մէջ կազմելու համար Գերեալ Ազգերու Մասնաւոր Կոմիտէ մը, որ պէտք է զբաղի նաեւ Ուըրանիոյ, Հայաստանի, Վրաստանի եւ ՍՍՀՄ-ի ազգային այլ հողամասերու

49. «Յառաջ» (օրաթերթ), Փարիզ, 28 Գեկտեմբերի, 1962:

50. Ե. Խաթամասեան, Հաստատումներ Հայ Դատի եւ Ամերիկայի Նոր Քաղաքականութեան մասին, «Ազգակ» (օրաթերթ), Պէյրութ, 4 Օգոստոսի, 1964:

51. Հ. Սիմոնեան, Սիբիւրեան հայութիւնը... էջ 476:

«ազատագրման» հարցով (52)։ Գոնկերեսի ընտրապայքարի օրերն էին, եւ նախադահ Քենեդիի չուզելով հանրապետականներուն մենաչընորհին վերածել վերոյիշեալ հարցը, 1962 թ.ի Յուլիսի 13-ին, «Գերեալ Ազգերու Շարաթ»ը յայտարարեց (53)։

«Հայրենիք» օրաթերթը զոհունակութեամբ արձանագրեց նախադահ Քենեդիի վերոյիշեալ յայտարարութիւնը, աւելցնելով թէ այդ յայտարարութեան համաձայն «մենք եւս դերեալ ազգերէն մէկն ենք»։ Նոյն շրջանակին պատկանող «Հայ Դատի Յանձնախումբ»ը յատուկ շնորհակալական նամակ մը դրկեց ԱՄՆ-ի նախադահին (54)։

1963 թ.ի Յունիսին, ԱՄՆ-ի եւ ՍՍՀՄ-ի միջեւ կնքուեցաւ «Աթոմական (ուսմբի) Փորձերու Արգիւման» դաշնագիրը։

1964 թ.ին, Ճորճ Քենըն հրատարակեց իր դիրքը (*On Dealing with the Communist World, N. Y.*), որ կը խօսէր ՍՍՀՄ-ի եւ ընկերայրական երկիրներու հանդէպ ԱՄՆ-ի վարած քաղաքականութեան մասին։ Հեղինակը, ի միջի այլոց կը դրէր թէ զուր է սպասել որ ոչ-ուսա ազգերը դեղեցիկ օր մը անջատուին Սով. Միութենէն։ Նման բան մը չի կրնար ըլլալ, կ'աւելցնէր ան, քանի որ ոչ-ուսա ազգերը իրենք զիրենք լաւ կը զգան այդ Միութեան մէջ։

ԱՄՆ-ի նախադահական ընտրապայքարի օրերն էին կրկին։ Դեմոկրատ նախադահական թեկնածուն որոշուած էր յանձին Լինտոն Ճոնսընի. իսկ 1964 թ.ի 13-17 Յուլիսին, Սան Ֆրանսիսկոյի մէջ կայացուցած իր համագումարին, Հանրապետական կուսակցութիւնը ԱՄՆ-ի նախադահական պաշտօնին համար իր թեկնածուն կը հռչակէր յանձին հանրապետական ծերակուտական Պերրի Կոլտուոթըրի, որ ծանօթ էր իր ծայրայեղ պահպանողական հակումներով։

Հանրապետականներու Սան Ֆրանսիսկոյի համաժողովը իր նախընտրական ծրագրի Ց-րդ յօդուածին մէջ հետեւեալ կերպ կը բանաճեւէր կուսակցութեան դիրքը «դերեալ ազգեր»ու հարցին նկատմամբ։

«Հանրապետականները կը հաստատեն երկար ատենէ ի վեր իրենց հետապնդած քաղաքականութիւնը ի նպատակ Եւրոպայի, Ասիոյ եւ Լատին Ամերիկայի մէջ սովետական տիրապետութեան տակ զըտնուող ազգերու ազատագրութեան, այն է՝ Հունգարիոյ, Լեհաստանի, Արեւելեան Գերմանիոյ, Չեխոսլովաքիոյ, Պուլկարիոյ, Լաթվիոյ, Լիթուանիոյ, Էսթոնիոյ, Հայաստանի, Ուզբեկիստանի, Ինչպէս

52. Նոյնը, էջ 478։

53. «Հայրենիք» (օրաթերթ), Պոսթ-ոն, 24 Յուլիսի, 1962։

54. Հ. Սիմոնեան, Սիւրբաբաճախութիւնը..., էջ 479-480։

եւ Քուպայի, ցամաքային Չինաստանի եւ շատ մը ուրիշ ազգերու ազատագրութեան» (55) :

Նախքան համադումարը, 1964 թ.ի Յուլիսի 8-ին, յատուկ հրահրուած շանրապետական կուսակցութեան քաղաքական յանձնաժողովին ներկայացած էին ձէյմս Թաչճեան եւ Պերճ Կիրակոսեան, որոնք յանձնախումբին խօսած էին «այն հիմնական մտահոգութիւններու մասին, որոնք կապ ունին Հայ Դատի հետ» (56) : Իսկ Պերրի Կոլտուոթըրը, Հայ Դատի Յանձնախումբին յղած իր հեռագրին մէջ կը յայտնէր թէ «Հայերն ալ տեղ ունին իր հողերն մէջ» (57) :

1964 թ.ի Յուլիսի 15-ին գումարուած «Գերեալ Ազգեր»ու հերթական խառն ժողովին, որուն կը նախագահէր ձորճ Մարտիկեան, առանձին ճառերով հանդէս եկան Փենսիլվանիայի կառավարիչ Ուիլիամ Սքրենթըն, նախագահական թեկնածու Կոլտուոթըր եւ փոխնախագահական թեկնածու Ուիլիամ Միլլըր, որոնք յայտարարեցին թէ «Հանրապետական կուսակցութիւնը անկեղծօրէն կը համակրի իրենց ազատութեան համար պայքարող ազգերուն», որոնց շարքին նաեւ հայոց ազգի դատին (58) :

ԱՄՆ-ի Հանրապետական կուսակցութեան՝ Սով. Հայաստանը «դերեալ երկիր» հռչակող տեսակէտին կողմնակից մէկ հայ քաղաքական կուսակցութեանէն դուրս, միւս հայկական կուսակցութիւնները բուն կերպով ընդդիմացան եւ դատապարտեցին Հայկական ՍՍՀ-ը եւ անոր ժողովուրդը «դերեալ ազգեր»ու շարքին մէջ դասուելն ու դասողները :

«Նիւ Եորք Թայմզ» օրաթերթի 15 Յուլիսի 1964 թ. համարին մէջ, հանրածանօթ լրագրող ու հրատարակազիր Կ. Լ. Սուլցպերկըր կը գրէր. «Ոչնչարանութիւնների խառնիճաղանձի մէջ, իր (Կոլտուոթըրի) գործարարները, հիմնապէս բանաւոր պլատֆորմով մուծել են շիտիւն մի ցանկ ժողովուրդների, որոնց «լեռնական ազատագրութեան» գործը բեռնուած է Միաց. Նահանգների վրայ : Ետկոսլովիայի հետ՝ այնտեղ խառնուած են բայթիկեան երկիրները, Ուքրայինեան եւ Հայաստանը... Զգտելով ազատագրել Հայերին, արդեօք ծերակուտականը չի՞ մտադրում մի հողամաս պոկել դաշնակից Թուրքիայից», կ'աւելցնէ հրատարակազիրը (59) :

55. «Յուսարեք» (օրաթերթ), Գահիրէ, 12 Օգոստոսի, 1964 :

56. «Յուսարեք» (օրաթերթ), Գահիրէ, 25 Յուլիսի, 1964 :

57. «Հայրենիք» (օրաթերթ), Պոսթն, 25 Հոկտ.ի 1964 :

58. «Յուսարեք» (օրաթերթ), Գահիրէ, 28 Հոկտ.ի 1964 :

59. Տես՝ «Ազգակ» (օրաթերթ), Պէյրութ, 4 Օգոստոսի, 1964, էջ 2 :

Անդրադառնալով Սուլցպերկերի յայտարարութեան, Տոքթ. Ե. Խաթանասեան իր «Հայ Դատի եւ Ամերիկայի Նոր Քաղաքականութեան Մասին» խորագրեալ յօդուածով մեղադրեց «Նիւ Եորք Թայմզ» ի հրատարակադիրը, որպէս «եւրեւոն շահեր»ու պաշտպան, որ որպէս իրատեղեակ քաղաքագէտ, վերահասու պէտք է ըլլար «որ Ամերիկայի Կոնգրեսը Յուլիսի վերջին եօթնեակը յայտարարեց «Գերեալ Ազգերի Շարաթ» եւ օրէնքի ուժով նուիրականացրեց այդ: Այս մարդասէր քայլով՝ Ամերիկան պաշտօնապէս ճանաչեց ոչ միայն Գերեալ Ազգերի Ռուսիայից անջատ դոյութիւնը, այլեւ՝ նրանց ազատագրական պայքարի իրաւունքը եւ իրաւացիութիւնը» (60):

Պերրի Կոլտուոթըրը, 25 Հոկտեմբերի 1964 թ.ին՝ Հ. Յ. Դաշնակցութեան ԱՄՆ-ի «Հայ Դատի Յանձնախումբ»ին իր յղած հեռագրով կը յայտարարէր. «Հանրապետութեան նախագահութեան պաշտօնին կոչուելու պարագային, պիտի ուզէի տեսնել, թէ Հայաստանի անկախութեան եւ ինքնորոշման իրաւունքի հարցը կ'արժարժուի Միացեալ Ազգերու կազմակերպութեան մէջ: Հայ ժողովուրդի կացութիւնը խորապէս դրաղեցուցած է զիս...» (61):

Կոլտուոթըրի վերոյիշեալ հեռագիրը հակասական տրամադրութիւններով դիմաւորուեցաւ սփիւռքահայ կազմակերպութիւններուն եւ մամուլին կողմէ: Իրենց քաղաքական ուղեգիծին հաւատարիմ, սփիւռքահայ տարբեր ձախատներ ողջունեցին, եւ կամ՝ խստօրէն դատապարտեցին ԱՄՆ-ի նախագահութեան հանրապետական թեկնածուին յայտարարութիւնը (62):

Դեմոկրատ թեկնածու Լինտըն ձոնսըն, որ ընտրապայքարի ընթացքին օպտադործած էր խաղաղութեան խաղաթուղթը, քուէներու մեծ առաւելութեամբ մը պարտութեան մատնեց Կոլտուոթըրը, եւ ընտրուեցաւ ԱՄՆ-ի նախագահ:

Նախագահ ձոնսընի օրով, հակառակ Վիեթնամի պատերազմի սաստկացումին, աւելի զգալի դարձաւ երկու գերհզօր պետութիւններու միջեւ ցուրտ պատերազմի մնացորդներուն վերջ դնելու ցանկութիւնը: 1964 թ.ին, Թուրքիա տհաճ կացութեան մը մատնուեցաւ, երբ նախագահ Լինտըն ձոնսըն՝ Կիպրոսի վէճին առիթով, ազդարարեց Թուրքիոյ, թէ ԱՄՆ պիտի չպաշտպանէր Թուրքիան սովետական

60. Ե. Խաթանասեան Հաստատումներ..., «Ազգակ» (օրաթերթ), 4 Օգոստոսի, 1964:

61. Գեքսամ Ահարոնեան, Խոհեր Յիսնամեակի Աւարտին, Պէյրութ, 1966, էջ 121:

62. Նոյնը:

յարձակումի մը դէմ, եթէ Թուրքիան իր զինեալ ուժերը Կիպրոս զրկէր ընդդէմ Յունաստանի (63) :

Քաղաքական իրապաշտութեան շրջան մը սկսած էր : Դեմոկրատները հաւատարիմ կը մնային Տին Ռաֆէլ՝ 1961 թ.ի կատարած յայտարարութեան, թէ ԱՄՆ-ի կառավարութիւնը դէմ է Սովետ Միութեան անդամահատումին :

Այսուհանդերձ Ամերիկեան Գոնկրեսը իր 1963 թ.ի Յունիսի 2-ի նիստին նշեց Հայաստանի Հանրապետութեան 45-րդ տարեդարձը : Գոնկրեսի քսանը մէկ անդամներ, որոնց մէջ Ներկայացուցիչներու Տան նախագահ ձոն Մքորմիքը, ճառերով հանդէս եկան : 1968 թ.ի Մայիսի 27-ին, նշուեցաւ Հայաստանի Հանրապետութեան յիսնամեակը, եւ Ծերակոյտի ու Ներկայացուցիչներու Տան զոյգ նիստերը սկսան Կիլիկեան Աթոռի հողեւորականներու աղօթքով : Գոնկրեսի զոյգ նիստներուն ելոյթներ եղան Հայաստանի «կորսուած անկախութեան» մասին (64) :

Մեծ Եղեռնի Յիսնամեակը անտես չմնաց ԱՄՆ-ի ներկայացուցչական տուններուն կողմէ : 1965 թ.ի Ապրիլի 26-ին եւ 29-ին, հայ ժողովրդին հասցէագրուած զնահատանքի ու վշտակցութեան արտայայտութիւններ կատարուեցան Ծերակոյտի եւ Ներկայացուցիչներու Տան նիստերուն : Սօսք առնող՝ աւելի քան քսան հինգ ծերակուտականներու եւ երեսփոխաններու շարքին էին ծերակուտական Թեա Քենետի եւ երեսփոխան ձերբա Ֆորա՝ ԱՄՆ-ի ապագայ նախագահը (65) :

ձերբա Ֆորա «յուզումով» կ'անդրադառնար հայ ժողովուրդին վրայ դործադրուած Թուրք ցեղասպանութեան յիսնամեակին, միաժամանակ յիշելով ջարդերէն վերապրող հայերու աղատութեան կողքին կոռուած ըլլալը Համաշխարհային Առաջին Պատերազմի ընթացքին (66) :

Ներկայացուցիչ Հորթըն կը հաստատէր թէ «ամբողջ Համաշխարհային Առաջին Պատերազմին մէջ ուրիշ ոչ մէկ դէպք այնքան ցնցիչ եւ ընդվզեցուցիչ էր, որքան այս անմարդկային արարքը Օսմանեան իշխանութիւններուն»՝ ընդդէմ իրենց հայ հպատակներուն : Անոնք նպատակադրած էին բնաջնջել Թուրքիոյ բոլոր հայերը՝ զանգուածային ջարդերով, սովահարութեամբ եւ աներեւակայելի չար-

63. «International Herald Tribune», Paris, August 23, 1974.

64. Հ. Միսոնեան, Սփիւռքահայութիւնը..., էջ 532-533 :

65. Գ. Ահարոնեան, Խոհեր Յիսնամեակի Աւարտին, էջ 114-120 :

66. H. A. Tarkmanian, *Truth About the Massacres and Deportations of the Armenian Population of the Ottoman Empire 1915-1922*, Beirut, 1975, p. 24.

չաբանքներով, առանց սեռի եւ տարիքի խտրութեան: Այս սաղայէ-
տական գործին մէջ՝ դրեթէ յաջողեցան: 1915 թ.ի վերջաւորութենէն
առաջ, բոլոր հայերը իրենց տուններէն արժատախիլ եղած էին, եւ
մէկ հատիկ հայ կարելի չէր գտնել, - բացի իբրեւ սարուկ ապրելէ, -
այն երկրին մէջ, որ հանդիսացած էր իրենց օճախը հաղարաւոր տա-
րիներէ ի վեր» (67):

Շուրջ կէս միլիոն հաշուող ԱՄՆ-ի հայերը, որոնց դիմաւոր-
արար կ'ուղղուէր համալիրանքի ու հայանպաստ վերոյիշեալ ար-
տայատութիւնները, մեծ դժուրակութեամբ կը լսէին այս բոլորք
Սակայն գործնական դեռնի վրայ ԱՄՆ-ի քաղաքական եւ դիւանա-
դիտական շրջանակներուն մէջ ոչ մէկ փոփոխութիւն կը նշմարուէր
Հայկական Հարցին հանդէպ եւ, 1915 թ.ին՝ հայոց դէմ գործադրու-
ած ցեղասպանութեան դնահատութեան շուրջ:

Յատկապէս այս ուսումնասիրութիւնը ստորադրողին ջանքե-
րով՝ Ռուանտայի պատուիրակ Նիքոտիմ Ռուհասիանքիքոյի՝ 1973
թ. և Ռուսիայի 25-ին, ՄԱԿ-ի Մարդկային Իրաւանց Յանձնաժողովին
համար պատրաստած «Ցեղասպանութեան Շուրջ» տեղեկագիրը (68)
ընդգրկեց նաեւ թուրքերու կողմէ հայոց դէմ գործադրուած ցեղաս-
պանութիւնը յիշատակող 30-րդ պարբերութիւնը, որ կ'ըսէ. «Անց-
նելով արդի ժամանակաշրջանին, կը տեսնուի յարաբերարար փառ-
տերու ամբողջական թղթածրար մը հայկական ջարդերու վերաբեր-
ու, որ նկարագրուած է որպէս «20-րդ դարու առաջին ցեղասպա-
նութիւնը» (69): ՄԱԿ-ի Մարդկային Իրաւանց Յանձնախումբին
Փոքրամասնութեանց Պաշտպանութեան եւ Ցեղային Պարականու-
թեան Արդիւման Ենթադասնախումբը դնահատանքով ընդունեց տե-
ղեկագիրը: Սակայն թուրքիա մեծ ճիղեր թափելով, յատկապէս 30-
րդ պարբերութեան ջնջումը պահանջեց, 1974 թ.ի Մարտի 6-ին կա-
յացած ՄԱԿ-ի Մարդկային Իրաւանց Յանձնաժողովի նիստին:

Ատուել կամ նուազ խանդալտութեամբ թուրքիոյ ճայնակ-
դեցան Յանձնաժողովի քսան եօթ պետութիւններու ներկայացուցիչ-
ներէն տասներ երկուքը: ԱՄՆ-ի ներկայացուցիչը՝ Ֆրիլի Ի. Հրֆ
ման, իր երկրին տեսակէտը ներկայացուց ժողովին, յայտարարելով
թէ «թուրք պատուիրակին ելոյթը եւ ցեղասպանութեան հարցին

67. Գ. Ահարոնեան, *Պոստիմպրեսիոն Աւարտին*, էջ 118:

68. «Երիտասարդ Հայ» (պարբերաբերք), Պէյրութ, քիւ 88, 1 Դեկտեմ-
բերի, 1973:

69. Nicodème Ruhashyankiko, *Study of the Question of the Pre-
vention and Punishment of the Crime of Genocide*, 25 June, 1973,
E / CN.4 / Sub. 2 / L. 583, p. 10.

չուրջ անոր կատարած ճշգրտմը երեւան կը բերեն զգալուն խնդիր մը, որ կրնայ դժուարութիւններ յարուցանող նախընթաց մը դառնալ: Այս պատճառով ալ, քարտուղարութիւնը իր տեղեկագիրը պատրաստելու ընթացքին պէտք է հնարաւոր առիթը ընծայէ կարծիքներու ազատ փոխանակութեան, իսկ միւս կողմէ՝ ցեղասպանութեան նըման զգալուն հարցի մը պարադային, մասնաւոր ճիշդ պէտք է թափուի, որպէսզի ամբաստանութեան մնացող կասկածելի հաստատումներ չըլլան (ընդգծումը մեզմէ, Զ. Մ.), մասնաւոր երբ անոնք կը հիմնուին կողմնակալ աղբիւրներու վրայ»: ԱՄՆ-ի ներկայացուցիչը համաձայն դտնուեցաւ թուրք պատուիրակին «այն առարկութեան թէ յիշատակուած աղբիւրներուն երեքը ուղղակի կերպով հայկական տեսակէտները կը ներկայացնեն, եւ 30-րդ պարբերութեան արծարծած ցեղասպանութեան հարցին կը մօտենան կողմնակալ կերպով: Նաեւ նկատի չեն առնուած աշխարհամարտի մասնակից եւ զօրաւոր յարձակումներու ենթակայ այդ օրերու թուրք կառավարութեան տեսակէտները: Երբ նման հարցի մը շուրջ պատմական աղբիւրներ կ'օգտագործուին, ուշադիր պէտք է ըլլալ որպէսզի հաւասարակընդունուած պատկեր մը ներկայացուի» (70):

ՆԱԹՕ-ի իր դաշնակիցը՝ Թուրքիան պաշտպանող ԱՄՆ-ի այս դիրքորոշումը արդար զայրոյթ յարուց սփիւռքահայ բոլոր չըջանակներու մօտ: ԱՄՆ-ի կառավարութիւնը, ու զայն ներկայացնող պատուիրակը մոռացութեան կու տային այն իրողութիւնը, թէ թուրքերու կողմէ հայոց դէմ դործադրուած ցեղասպանութեան առաջին եւ գլխաւոր վիճակներէն մէկը կը հանդիսանար այդ օրերուն Թուրքիոյ մօտ ԱՄՆ-ի դեսպանը՝ Հենրի Մորկինթաու, եւ թէ՛ ԱՄՆ-ի պետական քարտուղարութեան արխիւները լեցուն են թուրքերու կողմէ հայոց դէմ դործադրուած ցեղասպանութիւնը ապացուցող փաստաթուղթերով:

Հ. Յ. Դաշնակցութեան՝ Միացեալ Նահանգներու 81-րդ պատմաւարական ժողովի անունով յիսուն հոգինոց պատուիրակութիւն մը 1974 թ-ի Յունիսի 5-ին Ուաշինկթընի մէջ հանդիպում մը ունեցաւ ԱՄՆ-ի պետական քարտուղարութեան պատասխանատուներուն հետ, Հայկական Հարցին առնչակից այժմէական կարգ մը խնդիրներու մասին: Պատմաւարներու հարցումներուն պատասխանեցին պետական քարտուղարութեան թրքական բաժնի վարիչը, կազմակերպութեանց (որոնց շարքին՝ ՄԱԿ-ը) բաժնի տնօրէնը, եւ Հարաւային Եւրոպական Հարցերու տնօրէնը:

70. «Երիտասարդ Հայ» (պարբերաբերք), Պէյրութ, քիւ 92, 4 Մայիսի, 1974, էջ 17:

ԱՄՆ-ի կառավարութեան տեսակէտները պարզաբանող վերոյիշեալ տեսակցութեան տեղեկադրութիւնը, այնպէս ինչպէս հրատարակուած էր յիշեալ կուսակցութեան մամուլին մէջ, կը մէջբերենք ամբողջութեամբ:

«Պատգամաւոր ընկերները բացատրութիւն պահանջած են ՄԱԿ-ի ամերիկեան պատուիրակութեան բռնած գիրքին մասին Մարդկային Իրաւանց Յանձնաժողովի Մարտ 6-ի նիստին, երբ ցեղասպանութեան մասին պատրաստուած տեղեկադրէն հայկական ջարդերը յիշատակող 30րդ պարբերութիւնը ջնջելու առաջարկ ներկայացուցած էր Թուրքիոյ պատուիրակը: Արժարժուած է նաև Թուրքիոյ մէջ հայ փոքրամասնութեան իրաւունքներու բռնաբարձման հարցը եւ, վերջապէս, հարց եղած է թէ ի՞նչ է հայերու վերաբերող հարցերու նըկատմամբ պետական քարտուղարութեան գիրքը ՄԱԿ-էն ներս:

«Իժ-բախտարար, բացասական եւ խուսափողական եղած են ամերիկեան պատասխանատու պաշտօնատարներու տուած պատասխանները վերոյիշեալ հարցերուն: Այսպէս, անոնք յայտարարած են թէ այս միջոցին ամերիկեան շահերը չեն ներդաշնակուիր հայկական շահերուն հետ. թէ հայ ծագումով իր քաղաքացիներուն մտահոգութիւնները բաժնելու կամ պահանջներուն դոհացում տալու ամերիկեան կառավարութեան վարմունքը կը բխի տարբեր երկիրներու ներքին դորձերուն չեառնուելու իր ուղղութենէն: Պաշտօնատարները աւելցուցած են թէ ոչ-միջամտութեան սկզբունքին ամերիկեան կառավարութիւնը աւելի նախապատուութիւն կու տայ, քան «ազդերու ինքնորոշման» սկզբունքին, որովհետեւ -Ուաշինկթընի քաղաքականութիւնը հետամուտ է երկիրներու ներկայ գոյալիճակի պահպանման (up upon us)», եւ ոչ թէ՛ երկիրներու անդամահատման:

«Ամերիկացի պաշտօնատարները խօսած են նաև խաղաղութեան, օրէնքի, արդարութեան դադափարներուն մասին, պնդելով միաժամանակ որ համաձայնութիւն չկայ այն մասին՝, թէ ի՞նչ է անարդարութիւնը: Պետական քարտուղարութեան պատասխանատուները յայտնապէս մոռացութեան տուած են Մարդկային Իրաւանց Պաշտպանութեան Համաշխարհային Յայտարարութիւնը, որ շատ հասկնալի կերպով կը յայտնէ թէ ինչ բան կը բռնաբարէ մարդկային հիմնական իրաւունքները:

«Ինչ կը վերաբերի Թուրքիոյ կողմէ Պոլսոյ հայութեան վրայ ի դորձ դրուած ճնշումներուն եւ յատկապէս կրթական մարզէն ներս բանեցուած սեղմումներուն, ամերիկացի պաշտօնատարները յայտնած են, թէ պետական քարտուղարութեան ստացած տեղեկութիւնները չեն համապատասխաներ Հայ Ազգային Մարմնի տուած տեղեկութիւններուն եւ թէ Թուրքիոյ հայերը ճնշումի ենթակայ չեն, այլ կը վայելեն շատ մը իրաւունքներ: Պետական քարտուղարութիւնը,

այս պարագային եւս երկդիմութիւն ցոյց տալով, կ'ըսէ թէ, այդ կացութեան փոփոխութեան համար, ոչինչ կ'ուզէ կամ կրնայ ընել:

«Վերջապէս, միակ կէտը, ուր պետական քարտուղարութիւնը դէժ որոշ հասկացողութիւն մը ցոյց տուած է հարցապնդող մեր ընկերներու քննադատութիւններուն, եղած է Մարդկային Իրաւանց Յանձնաժողովի Մարտ 6-ի նիստին կապակցութեամբ, որուն համար ընդունած է որ ՄԱԿ-ի մօտ ամերիկեան պատուիրակ Հոֆմանի արտայայտութիւնը «սխալ հասկացողութիւն» մըն է, զոր կը խոստանայ պարզել մօտ պարագային» (71):

1974 թ.ի Յուլիսի ընթացքին, Թուրքիոյ՝ Կիպրոսի վրայ կատարած ներխուժումին պատճառով, լարուեցան ԱՄՆ-թրքական յարաբերութիւնները: ԱՄՆ-ի Գոնկրեսը կասեցուց Թուրքիոյ սահմանուած զինամթերքի առաքումները, իսկ Թուրքիա, իր հերթին՝ ջնջեց իր հոդերուն վրայ ԱՄՆ-ի ունեցած ռազմախարխիսներուն տրուած դիւրութիւններուն մեծագոյն մասը:

Քաղաքական վերոյիշեալ կացութիւնը օգտագործուեցաւ ամերիկահայութեան կողմէ, որուն թափած ճիգերուն շնորհիւ, Մեծ Եղեռնի վաթսունամեակին առիթով, 1975 թ.ի Ապրիլի 8-ին, ԱՄՆ-ի Ներկայացուցիչներու Տունը, 19-ի դէմ 377 ձայնով քուէարկեց բանաձեւ մը, որ Ապրիլ 24-ը կը հռչակէր «Մարդու դէմ մարդու անմարդկայնութիւնը յիշատակող աղբային օր»: Քուէարկութենէն առաջ, պետական քարտուղարութեան ճնշումով, բանաձեւէն ջնջուած էր Թուրքիոյ մասին եղած յիշատակութիւնը:

Պետական քարտուղարութիւնը անբաղձալի նկատեց Թուրքիան յիշատակող սկզբնական բանաձեւը, քանի որ այդ մէկը պիտի աղղէր արդէն իսկ վատթարացած թուրք-ամերիկեան յարաբերութեանց վրայ: Պետական քարտուղարութեան պաշտօնատարներէն մէկը կը յայտարարէր թէ «մենք կը զգանք հայկական ծագումով մեր քաղաքացիներուն զրացումին խորութիւնը, բայց այս «դէպքը» պատահած էր վաթսուն տարիներ առաջ, եւ հիմա զայն կրկին արծարծելը պիտի մնասէր Թուրքիոյ հետ մեր յարաբերութիւններուն, որ արդէն սկսած է մտածել թէ արդեօ՞ք Հրահանդելու է որ ԱՄՆ լքէ Թուրքիոյ իր ռազմախարխիսները» (73):

Սակայն բանաձեւը ԱՄՆ-ի կողմէ պաշտօնապէս որդեգրուելու համար, անհրաժեշտ էր որ ստանար նաեւ Ծերակոյտին վաւերացումը: 975 թ.ի Ապրիլի 22-ին հարցը բերուեցաւ Ծերակոյտի Արդարութեան Յանձնախումբին, սակայն այնտեղ ճիշդ չկատարուեցաւ

71. «Ազգակ» (օրաթերթ), Պէյրութ, 24 Յուլիսի, 1974:

72. «International Herald Tribune», Paris, April 12-13, 1975.

73. ՆայՅը:

զայն քուէարկելու: Արդարեւ՝ Ապրիլի 21-ին, Թուրքիոյ մօտ ԱՄՆ-ի դեսպանը պետական քարտուղարութեան իմացուցած էր թէ Թուրքերը Ներկայացուցիչներու Տան կողմէ քուէարկուած բանաձեւը «անարգանք մը» կը համարէին: Արդարադատութեան Յանձնախումբի անդամ՝ դեմոկրատ ձոն Թաննի կացութիւնը պարզելով կը յայտնէր թէ բանաձեւին հանդէպ պետական քարտուղարութեան ցոյց տուած ընդդիմութեան պատճառով չուտափոյթ վաւերացումի մը հեռանդկարը գոյութիւն չունէր, եւ թէ՛ հաւանաբար ամերիկահայ համայնքին համար համակրանքի նոր բանաձեւ մը որդեգրուէր: Այդպէս ալ հարցը դատապարտուեցաւ մոռացութեան (74):

Ամերիկացի լրագրող եւ հրատարակաբեր Պիլ Պոյարսքի, «Ինթերնեշնըլ Զերբլա Թրիւպիս»-ի մէջ «1915-ի Ջարդերուն ԱՄՆ-ի Դիւանադիտական Տեսակէտ»ը խորագրով յօդուածին մէջ յայտարարեց, թէ Գիսինճըրի պետական քարտուղարութեան ջանքերը կը միտին «ձեւափոխել պատմութիւնը» (75):

Վատէն վատթարագոյնի չզացին սակայն ԱՄՆ-Թրքական յարաբերութիւնները: Մինչեւ իսկ սկսան բարեխառուիլ, մանաւանդ միջ-կառավարական աստիճանի վրայ, Թուրքիոյ հանդէպ Գոնկրեսի կատարած որոշ զիջումներուն շնորհիւ: Ապահովուեցաւ նաեւ Թուրքիոյ մէջ ԱՄՆ-ի ռազմախարխիսներու ապագան, թէեւ Թուրքիոյ համար որոշուած զինարդելը կը մնար ի զօրու:

1975 թ.ի տարեկերջին ստորագրուեցաւ միջազգային խաղաղութեան կայունացման միտող Հելսինքիի համաձայնագիրը, որուն յանձնառու կ'ըլլային նաեւ ԱՄՆ, ՍՍՀՄ եւ Թուրքիա: Հելսինքիի համաձայնագրով երաշխաւորուեցան պետութեանց սահմանները: Պիտի յարգուէր միջազգային սթաթուս-ֆուռն:

1976 թ.ի Մայիսի 11-ին, ԱՄՆ-ի Գոնկրեսի մէկ ենթայանձնախումբը յատուկ ունկնդրութիւն մը շնորհեց «Արմինիըն Էսեմպլի»-ի անունով իրեն ներկայացող հայկական պատուիրակութեան (անդամներ՝ Վահագն Տատրեան, Տենիս Փափազեան, Լեւոն Սարգիսեան, Տիգրան Սմսարեան, Ռիչըրտ Յովհաննէսեան, Աւետիս Սանճեան, Շաւարշ Թորիկեան), որուն հետ, այլ հարցերու կարգին նաեւ քննեց «ցեղասպանութեան հարցը եւ անոր առնչութիւնը ԱՄՆ-ի ապագայ արտաքին քաղաքականութեան հետ»: Ենթայանձնախումբի նախագահ Ուրլֆ, ներկայացուցիչ Տանիէլսըն հայանպատ կեցուածք որդեգրեցին, իսկ ներկայացուցիչներ Հէյզ եւ Պըրք, ունկնդրութիւնը

74. «The Daily Star», Beirut, April 24, 1975.

75. Bill Boyarski, **A Diplomatic U. S. View of 1915 Massacre**, «International Herald Tribune», Paris, April 12-13, 1975.

ձախողեցնելու հակամէտ հարցումներ եւ առարկութիւններ առաջ քաշեցին: «Արմինիւրն էսեմպլի»-ի պատուիրակութեան կողմէ տրուած բոլոր վկայութիւնները (84 տպագիր էջ) ապա հրատարակուեցան Գոնկրեսին կողմէ որպէս պաշտօնական ատենադրութիւններ (76):

1976 թ.ի ԱՄՆ-ի նախագահական ընտրութեանց առիթով Հ. Յ. Գաշնակցութեան եւ «Հայ Ազգային Խորհուրդ»-ի Ամերիկայի ներկայացուցիչները միաժամանակ կապ պահեցին նախագահ ձերբւրաց Ծորաի եւ Դեմոկրատ կուսակցութեան նախագահական թեկնածու՝ Ճիմի Գարթլըրի հետ, «Հայանպատ արտայայտութիւններ եւ ապա՝ առանձին հանդիպումներ խնդրելով»: Նախագահ Պորտ դիմումներէն ոչ մէկուն ընդառաջեց, մինչ Ճիմի Գարթլըր կատարեց խնդրանքներուն երկուքն ալ: Հոկտեմբերի կէսերուն, Նիւ Չըրչիլի օդակայանին մէջ, Ճիմի Գարթլըր, իր սեփական օդանաւին վրայ ընդունեց Հերբի Տէրաէրեանն ու Լէօ Սարգիսեանը: Տէրաէրեան շեշտեց տեսակցութեան կարեւորութիւնը ոչ միայն ամերիկահայութեան, «այլեւ աշխարհի տարածքին ապրող վեց միլիոն հայերուն համար, որոնք կ'ապրին Մ. Նահանգներու դիտանկիւնէն ռազմադիտական կարեւոր շրջաններու մէջ»: Գարթլըր բաժնեց «այդ մատնանշումին իրաւացիութիւնը»: Ապա՝ Լէօ Սարգիսեան ամփոփ կերպով Հայկական Հարցը ներկայացուց, ընդգծելով որ «աշխարհասփիւռ հայերը խորապէս ընդլզած էին» հայասպանութեան ճշմարտութիւնը վարագուրելու պետական քարտուղարութեան վերջին փորձերուն դէմ» եւ ԱՄՆ-ի «պետական վարչամեքենայէն ներս մուտքի, ինչպէս եւ ամերիկեան ներքին թէ արտաքին քաղաքականութեան ձեւաւորումին մէջ իրենց մասնակցութեան առջեւ դրուած սահմանափակ կարելիութիւններուն համար»: Առաջին հարցին մասին Գարթլըր զուգահեռ մը դտած էր պետական քարտուղարութեան՝ Կիպրոսի հարցով վարած քաղաքականութեան հետ, որ ինք դատապարտելի դտած էր, եւ կիպրոսէր տարբերը այդ զնահատած էին իր մէջ: Իսկ Հայկական Հարցին մասին ըսած էր թէ «ծանօթ չեմ այն չափով, որքանով պէտք է ըլլայի հաւանարար», աւելցնելով թէ կը փորձէ լսել եւ իմանալ: Իսկ պետական վարչամեքենային եւ քաղաքականութեան ծրագրումի հարցերուն շուրջ դրական արտայայտութիւն ունեցած է Ճիմի Գարթլըր (77):

76. 1976-ը Հայ Դատի ձամբով, «Ազգակ» (օրաթերթ), Պէյրութ, 1 Յունուարի, 1977:

77. «Armenian Weekly», Boston, October, 25, 1976, «Ազգակ» (օրաթերթ), Պէյրութ, 14 Նոյեմբ.ի 1976:

Քանի մը օրեր ետք, Ճիմի Քարթլը, ամերիկահայութեան հետեւեւալ պատգամը ուղղեց, նախքան իր՝ ԱՄՆ-ի նախագահ ընտրուելը՝

«Հայաստանի պատմութիւնը, որ կը տարածուի երեք հազար տարիներու վրայ, պատմութիւնն է գոյատեւումի՝ ճնշող դժուարութեանց դէմ, յաղթանակի՝ տիրապետողներու դէմ, ինչպէս նաեւ վրկայութիւնը՝ մարդկային ոգրերդական տառապանքի :

«Հայ ժողովուրդը տեւարար ցուցարեբեց անպարտելի ոգի մը եւ նուիրում՝ ազատութեան դատին, ինչ որ մարմին ստացաւ Հանրապետութեան ստեղծումով, 1915-1917 տարիներու արիւնոտ հանդրուանէն անմիջապէս ետք :

«Մօտաւորապէս մէկուկէս միլիոն մարդ սպաննուեցաւ «20-րդ դարու առաջին ցեղասպանութեան ընթացքին», այսուհանդերձ՝ հակառակ անոր որ պատմական ոգրերդութիւնը դեռ չէ սրբադրուած, հայերը՝ ուր որ ալ գտնուին, կը շարունակեն պահել իրենց մշակութիւնն ու ազատութեան ձգտումը :

«Այսօր, պատմական Հայաստանի մէկ փոքր բաժինը ենթակայ է Պորհրդային Միութեան, իրբեւ Հայաստանի Պորհրդային Ընկերվարական Հանրապետութիւն, մինչ մնացեալ բաժինը տակաւին մաս կը կազմէ Թուրքիոյ :

«Ես կը համարեմ հայ ժողովուրդի ձգտումին եւ կ'ըմբռնեմ իրենց հայրենիքը դարձեալ ազատ տեսնելու անոնց մղումը : Աւելի'ն, ես ուժղնօրէն կողմնակից եմ Յեղասպանութեան Միջադրային Դաշնադիրը բարեփոխելու պահանջին :

«Ժամանակը եկած է, որպէսդի աշխարհ անդրադառնայ թէ ցեղասպանութեան դործածութիւնը, իրբեւ պետական քաղաքականութիւն, որեւէ ժողովուրդի կողմէ, մարդկութեան դէմ դործուած ոճիր մըն է, որ պէտք է դատապարտուի :

«Նմանապէս կը գիտակցեմ թէ բաղմաթիւ հայեր մեծապէս նըպաստած են Միացեալ Նահանգներու մտաւորական եւ մշակութային կեանքին - խորքին մէջ անոնք կարեւոր ազդեցութիւն դործած են աշխարհի մշակութիւններուն վրայ, դարբերու ընթացքին - եւ թէ՛ անոնք ու իրենց ազդային պատմութիւնը արժանի են յաւելեալ ուշադրութեան, մեր կառավարութեան եւ այս երկրի բոլոր քաղաքացիներուն կողմէ :

«Իբրեւ ղեկավար Դեմոկրատ կուսակցութեան - կուսակցութիւնը Վուտրօ Ուելլսընի, մարդ մը՝ որ խոր դուրդուրանք ցուցարբեբեց հայութեան հանդէպ, ժամանակի մը մէջ, երբ անոնք ենթարկուած էին ծայրադոյն անարդարութեան - ես պիտի աշխատեմ որ հայ ժողովուրդի ձայնը լսելի դառնայ, եւ թէ՛ Լիբանանի հայութեան օղնութեան հասնելու հարցին նման խնդիրներ կարեւորութեամբ նկատի

պիտի առնուին: Բայց այս նպատակները իրադրոճելու համար, ես պէտք պիտի ունենամ ձեր թէ՛ աջակցութեան եւ թէ՛ ցուցմունքներուն:

21 Հոկտեմբեր 1976
Աթլանթա, Ճորճիա

Անկեղծօրէն ձերդ՝
ՃԻՄԻ ՔԱՐԹԸՐ» (78)

Անշուշտ սոյն յայտարարութիւնը համակրական բնոյթ ունէր լոկ եւ ոչ պաշտօնական, քանի որ Քարթըր տակաւին քուէներու կարօտ նախադահական թեկնածու մըն էր միայն: Այսուհանդերձ զգալի է յայտարարութեան հաւասարակշռեալ, չափաւոր բնոյթը: Թուրքիան չէ յիշատակուած որպէս ցեղասպան, միւս կողմէ՝ ցուրտ պատերազմի շրջանէն մնացորդ բանաձեւեր չկան: Քարթըրի արտայայտութիւնը չի հակասեր 1961-62 թթ. ու Տիւն Ռասքի արտայայտութեանց: Միւս կողմէ՝ նշմարելի է Քարթըրի մօտ ցեղասպանութեան հարցին շուրջ աւելի յստակ եւ ընդհանրապէս հայանպաստ դիրք մը:

78. «Զարթով» (օրաթերթ), Պէյրութ, 1 Յունուարի, 1977:

THE FOREIGN POLICY OF U. S. AND THE ARMENIAN QUESTION (1900-1976)

ZAVEN MESSERLIAN

(Summary)

Starting with the twentieth century, the people of the U. S. and its government, has shown a special interest in the Armenian people and the Armenian Question. The undertakings of President W. Wilson, and the boundaries of the future independent Armenia drawn by him in 1920, were the first active steps taken by the U. S. government to solve the Armenian Question. However, from that day on, and during the following decades, successive U. S. governments, dictated by their economic and international political interests, adopted a pro-turkish stand, while maintaining their symphathetic position and verbal support towards the Armenian Question.